



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ
ԿԱՆԱՆՑ, ԱՆԶԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	6
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑԱՆԿ.....	9
1. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ.....	17
2. ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ	21
3. ԿԱՆԱՆՑ ԵՎ ՄԱՅՐԵՐԻ ՀԵՏ ՊԱՀՎՈՂ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ.....	33
4. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԱՆՑ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	49
5. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.....	55
6. ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.....	58
7. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	61

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱՆ – ՀՀ արդարադատության նախարարություն
- ՔԿԿ – քրեակատարողական հիմնարկ
- ՊՈԱԿ – «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպություն

- Ստորաբաժանում – «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Աբովյան» ստորաբաժանում
- ԽԿԿ – Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե
- ՄԻՊ- – ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
- ԿԱՄ – Կանխարգելման ազգային մեխանիզմ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ինչպես նաև Հայաստանի կողմից վավերացրած միջազգային հանրաճանաչ փաստաթղթերը հոչակում են խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքը, որից բխում է միջազգայնորեն ընդունված պահանջներին և չափանիշներին համապատասխան համալիր միջոցառումների շարունակական իրականացումը:

Խոշտանգման բացարձակ արգելքի տեսանկյունից առանցքային նշանակություն ունի դրա կանխարգելումը, ինչն իր հերթին ենթադրում է օրենսդրական և գործնական մակարդակում պարբերական ու համակարգված միջոցառումների համալիր:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՀ սահմանադրական օրենքը ՄԻՊ-ին է վերապահել «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված կամընտիր արձանագրությամբ սահմանված ԿԱՄ-ի կարգավիճակը: Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է ՄԻՊ-ի լիազորությունները ԿԱՄ-ի կարգավիճակով ՔԿՀ-ներ պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր կատարելու ՄԻՊ-ի հնարավորությունը:

ԿԱՄ-ի կարգավիճակով ՄԻՊ-ի գործունեությունն ուղղված է երկրում յուրաքանչյուր անձի պաշտպանությանը խոշտանգումից, արժանապատվությունը նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունքից ու պատժից, որոնք հավաքական հասկացությամբ կոչվում են վատ վերաբերմունք:

Անազատության մեջ գտնվող յուրաքանչյուր մարդու համար պետք է ստեղծել պահման ու վերաբերմունքի արժանապատիվ պայմաններ և երաշխիքներ: Ցանկացած պարագայում հիմնարար նշանակություն պետք է ունենա անձի համար պետության կանխատեսելի վարքագիծն ու անհատական վերաբերմունքն ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի նկատմամբ:

Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովումն ունի հիմնարար նշանակություն: Հարցը հատկապես զգայուն է այն առումով, որ վերաբերում է անձանց, որոնք ունեն հատուկ վերաբերմունքի կարիք: Ազատությունից զրկման վայրում կանայք և անչափահասները կարող են խոցելի դառնալ՝ պայմանավորված, օրինակ, ազատությունից զրկման վայրերում զոհայնացմամբ, սեռական բռնության ենթարկվելու վտանգով, սեռով և տարիքով պայմանավորված առողջապահական և խնամքի հատուկ միջոցների, ընտանիքի անդամների հետ կայուն կապի բացակայությամբ և այլն: Այս առումով, պետք է նկատի ունենալ, որ կանայք և անչափահասներն անազատության մեջ պահվելու ընթացքում հանդիպում են դժվարությունների, որոնք անհրաժեշտ են դարձնում ուշադրության կենտրոնում պահել նրանց հատուկ կարիքները (օրինակ՝ բժշկական անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունը, հոգեբանական աջակցությունը, պահման բավարար պայմանները, կրթությունը, զբաղվածությունը և այլն):

Պետությունը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցներն ազատությունից զրկված կանանց և անչափահասների ֆիզիկական և հոգեկան առողջությունն ու անձեռնմխելիությունն ապահովելու համար:

Այսպիսով, ոլորտն ունի համակարգային ուսումնասիրության, առկա խնդիրների վեր հանման և դրանց լուծման կոնկրետ ուղղությունների նախանշման կարիք, ինչն էլ սույն արտահերթ հրապարակային զեկույցի նպատակն է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը հիմնված է ՄԻՊ-ի՝ որպես ԿԱՄ-ի 2022 թվականի մարտի 16-ի և հունիսի 13-ի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության ներկայացուցիչների, ինչպես նաև ԿԱՄ-ի բժիշկ, սոցիոլոգ, հոգեբան և իրավագետ անկախ փորձագետների ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ իրականացված չհայտարարված մշտադիտարկման այցերի, դրանց նախորդած այլ այցերի ընթացքում արձանագրված խնդիրների և այդ խնդիրների լուծման առաջարկների դիտարկման արդյունքների վրա:

Զեկույցի կազմման հիմքում դրվել են նաև ՄԻՊ-ին հասցեագրված ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովմանն առնչվող բոլոր անհատական բողոքները, դրանց քննարկման արդյունքները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների, միջազգային կառույցների ու հասարակական կազմակերպությունների կողմից հրապարակումների ուսումնասիրությունները:

ԿԱՄ-ի կողմից ուսումնասիրման առարկա են դարձել ազատությունից զրկված կանանց և անչափահասների պահման պայմանները, նրանց իրավունքների և ազատությունների ապահովման վիճակը: Առանձնակի ուշադրություն է դարձվել նաև ազատությունից զրկված օտարերկրացի կանանց իրավունքների ապահովմանն առնչվող խնդիրներին:

Մշտադիտարկման այցերի ընթացքում ուսումնասիրվել են նաև հղի կանանց և մայրերի հետ պահվող մինչև երեք տարեկան երեխաների պահման պայմանները, նրանց իրավունքների և ազատությունների ապահովման վիճակը:

Այցերի ընթացքում տեղի են ունեցել առանձնագրույցներ ՔԿՀ-ի վարչակազմի, Ստորաբաժանման բժշկական անձնակազմի և ազատությունից զրկված անձանց հետ:

Ուսումնասիրվել են ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովմանը վերաբերող փաստաթղթերը (բժշկական օգնության ու սպասարկման, կրթության ապահովման, սննդի տրամադրման և այլ վերաբերելի փաստաթղթեր ու վարվող մատյաններ): Իրականացվել է ստացված տեղեկությունների

համադրում և վերլուծություն, վեր են հանվել օրենսդրական կարգավորման բացերն ու թերությունները:

Այցերի ընթացքում օգտագործվել են տեխնիկական միջոցներ, մասնավորապես՝ լուսանկարահանող, տարածությունը, ջերմությունը և խոնավությունը չափող սարքեր:

Արտահերթ զեկույցում ամփոփված են նաև ՄԻՊ-ի՝ որպես ԿԱՄ-ի 2018 թվականի հուլիսի 25-ին հրապարակված «Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովման վերաբերյալ» զեկույցում տեղ գտած խնդիրների լուծմանն ուղղված Պաշտպանի առաջարկների կատարման մոնիթորինգի արդյունքները:

ԿԱՄ-ի կողմից մշտադիտարկման այցերի ընթացքում վեր հանված խնդիրները քննարկվել են «Աբովյան» ՔԿՀ-ի իրավասու ներկայացուցիչների, այդ թվում՝ հիմնարկի և Ստորաբաժանման ղեկավարների հետ, արձանագրվել են նաև վարչակազմի և բժշկական անձնակազմի բարձրացրած խնդիրներն ու նրանց կարիքները:

Մշտադիտարկման այցերի ընթացքում «Աբովյան» ՔԿՀ-ի վարչակազմը և Ստորաբաժանման բժշկական անձնակազմը պատրաստակամ համագործակցել են ՄԻՊ-ի ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս և ցուցաբերել են անհրաժեշտ աջակցություն:

2022 թվականի հոկտեմբերի 26-ին ԿԱՄ-ի ներկայացուցիչները «Աբովյան» ՔԿՀ-ում արձանագրած խնդիրները և բարձրաձայնած հարցերը քննարկել, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված աշխատանքները դիտարկել են ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի, Քրեակատարողական ծառայության ղեկավար կազմի, ՊՈԱԿ-ի տնօրինության և ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ներկայացուցիչների հետ համատեղ:

ՀՀ ՄԻՊ-ի աշխատակազմում իրականացվել են մասնագիտական քննարկումներ, որոնց հիման վրա սույն արտահերթ հրապարակային զեկույցը ոչ միայն վեր է հանում ազատությունից զրկված կանանց և անչափահասների (այդ թվում՝ օտարերկրացի) իրավունքների ապահովմանն առնչվող խնդիրները, այլև մասնագիտական վերլուծությունների հիման վրա ներկայացնում է արձանագրված խնդիրների լուծման

իրավական և գործնական մեխանիզմներ, ոլորտի իրավական ակտերում
փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկություններ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑԱՆԿ

1. «Աբովյան» ՔԿՀ-ի մասնաշենքերում տեղաշարժման խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց համար ապահովել հարմարեցված միջավայր.
2. քայլեր ձեռնարկել ազատությունից զրկված անձանց պատշաճ որակի անկողնային պարագաներ տրամադրելու ուղղությամբ.
3. «Աբովյան» ՔԿՀ-ի մեկուսարանում իրականացնել պատժախցերի վերանորոգման աշխատանքներ.
4. «Աբովյան» ՔԿՀ-ի մեկուսարանում ընթացիկ վերանորոգման աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի անարգել ապահովվի դեպի խցեր մուտքն ու ելքը.
5. «Աբովյան» ՔԿՀ-ի կանանց տեղամասի կացարանում իրականացնել ձևափոխման այնպիսի աշխատանքներ, որոնք կապահովեն օրենսդրությամբ սահմանված թվից ոչ ավել ազատությունից զրկված անձ պահելու հնարավորություն.
6. քայլեր ձեռնարկել «Աբովյան» ՔԿՀ-ում հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար իրենց կարիքներին համարժեք միջավայր և պահման առանձնահատուկ պայմաններ ապահովելու ուղղությամբ.
7. «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող մինչև երեք տարեկան երեխաների համար նախատեսել և կահավորել առանձնացված խաղահրապարակ և կանաչապատ զբոսաբակ.
8. «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող հղի և իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող ազատությունից զրկված կանանց համար առանձնացնել և պատշաճ կահավորել խուց (կացարան).
9. «Աբովյան» ՔԿՀ-ում հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց համար նախատեսված խցերի և կացարանների սանհանգույցներն ու լոգարանները հարմարեցնել հղի կնոջ և մինչև երեք տարեկան երեխաների առանձնահատուկ պահանջներին, այն է՝ ապահովել փաք ջրով, զուգարանակոնքով

կահավորված սանհանգույցով, լոգասենյակով և առաջին անհրաժեշտության այլ պարագաներով.

10. «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող մինչև երեք փարեկան երեխաների զարգացման համար նախատեսել անհրաժեշտ խաղեր և պարագաներ, ինչպես նաև ծրագրեր.

11. քայլեր ձեռնարկել Ստորաբաժանումում «ընտանեկան բժիշկ» մասնագիտացմամբ բժշկի ներգրավման ուղղությամբ կամ Ստորաբաժանման բժիշկներին ընդգրկել ընտանեկան բժշկության վերապատրաստման դասընթացներում.

12. ազատությունից զրկված անձանց գանգապների դեպքում բժշկական զննությունը կազմակերպել բժշկի կողմից և դեղորայքային նշանակումներն իրականացնել միայն վերջինիս ցուցմամբ.

13. քայլեր ձեռնարկել «Աբովյան» ՔԿՀ-ի կանանց փեղամասի բժշկական սպասարկման բաժանմունքն հոսող ջրով և սանհանգույցով ապահովելու ուղղությամբ.

14. «Աբովյան» ՔԿՀ-ի մեկուսարանում և կանանց փեղամասում իրականացնել բժշկական սպասարկման համար նախատեսված սենյակների վերանորոգման աշխատանքներ.

15. Ստորաբաժանումում բացառել խոտանման ենթակա դեղերի առկայությունը և սահմանել դրանց ոչնչացման հստակ մեխանիզմներ՝ պահպանելով օրենքով սահմանված ընթացակարգերը.

16. Ստորաբաժանումում ապահովել բժշկական թափոնների հավաքման և փոխադրման օրենքով սահմանված հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների պահպանումը. մշակել բժշկական թափոնների հավաքման, պահման և փոխադրման հստակ մեխանիզմներ և վերոգրյալի կապակցությամբ իրականացնել բժշկական անձնակազմի վերապատրաստումներ.

17. Ստորաբաժանումում դեղորայքային ֆոնդը համալրել ծնողների հետ քրեակարարողական հիմնարկում պահվող մինչև երեք փարեկան երեխաների համար անհրաժեշտ առաջին բժշկական օգնության դեղամիջոցներով.

18. Ստորաբաժանման կաբինետները համալրել ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1936-Ն որոշման հավելված 3-ով նախատեսված պարագաներով և գործիքներով.

19. Ստորաբաժանումում պարզաճ իրականացնել ազատությունից զրկված անձանց դիսպանսեր հաշվառումը և հսկողությունը.

20. Ստորաբաժանումում դիսպանսեր հաշվառման վերցված ազատությունից զրկված անձանց նկատմամբ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրականացնել ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ սահմանված լաբորատոր-գործիքային հետազոտությունները և նեղ մասնագիտական խորհրդատվությունները.

21. մշակել ազատությունից զրկված անձանց բժշկական միջամտություններին գրավոր իրազեկված համաձայնություն տալու ընթացակարգեր և ձևաթղթեր՝ բացառելով առանց անձի գրավոր համաձայնության բժշկական միջամտությունների իրականացման օրենսդրական պահանջները.

22. ազատությունից զրկված անձին յուրաքանչյուր անգամ հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրելու պարագայում՝ ստանալ անձի գրավոր իրազեկված համաձայնությունը, իսկ դրանից հրաժարվելու կամ բուժումը դադարեցնելու պահանջ ներկայացնելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով քննարկել ոչ հոժարակամ բուժում սկսելու անհրաժեշտության հարցը.

23. ազատությունից զրկված անձանց մոտ հիվանդությունների կանխարգելման նպատակով արդեն իսկ մշակված տարեկան կանխարգելիչ միջոցառումներն իրականացնել ամբողջական ծավալով.

24. Ստորաբաժանումն ապահովել անհրաժեշտ և բավարար քանակի դեղամիջոցներով և բժշկական պարագաններով.

25. քայլեր ձեռնարկել ազատությունից զրկված անձանց ըստ անհրաժեշտության դեղորայքով ապահովելու գործընթացը կապարելագործելու ուղղությամբ՝ քրեակատարողական ծառայությանն անհրաժեշտ դեղերի ցանկի ընդլայնման, դրանց

քանակի ավելացման և դեղերի ձեռք բերման այլընտրանքային մեխանիզմների ներդրման միջոցով.

26. ազատությունից զրկված անձանց կողմից իրենց կամ մերձավոր ազգականների միջոցների հաշվին ձեռք բերված դեղամիջոցները «Աբովյան» ՔԿՀ ընդունել բժշկական համապատասխան ցուցմամբ և չվնասելու սկզբունքով.

27. քայլեր ձեռնարկել ազատությունից զրկված անձանց նախնական բժշկական զննության պարշաճ իրականացմանը նպաստող բավարար պայմաններ (կահավորանք, բնական լուսավորություն) ապահովելու ուղղությամբ.

28. աշխատանքային օրերին և ժամերին ազատությունից զրկված անձանց նախնական բժշկական զննությունը կազմակերպել բժիշկի կողմից.

29. ենթադրյալ խոշտանգման դեպքեր հայտնաբերելիս իրականացնել ազատությունից զրկված անձանց պարշաճ բժշկական զննություն և ապահովել դրա պարշաճ արձանագրումն ու օրենսդրությամբ սահմանված կարգով իրավապահ մարմիններին ներկայացումը.

30. քայլեր ձեռնարկել մասնավոր ընկերության կողմից ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի անվտանգության, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 1182-Ն որոշման հավելված 1-ով սահմանված օրական նվազագույն չափաբաժինների պահպանման նկատմամբ վերահսկման մեխանիզմների և դրանց օրենսդրական կարգավորումների ներդրման ուղղությամբ.

31. ազատությունից զրկված կանանց մոտ պահվող մինչև երեք տարեկան երեխաներին ապահովել օրենսդրությամբ սահմանված սննդի համապատասխան չափաբաժիններով և տեսականիով.

32. ազատությունից զրկված անձանց լոգանքի պարշաճ կազմակերպման նպատակով լոգասենյակներում իրականացնել համապատասխան վերանորոգման աշխատանքներ.

33. ապահովել լոգասենյակների պարշաճ կահավորումը և լոգանքի տրամադրումը.

34. ապահովել լվացքի պարշաճ կազմակերպումը.

35. նախաձեռնել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն՝ ազատությունից զրկված անձանց համար նախատեսելով շաբաթական առնվազն 2 անգամ լոգանքի հնարավորություն՝ ելնելով ազատությունից զրկված կանանց ընդհանուր հիգիենայի պահպանման անհրաժեշտությունից և յուրահատկություններից.

36. քայլեր ձեռնարկել «Աբովյան» ՔԿՀ-ի մեկուսարանի մասնաշենքի զբոսաբակերի թիվն ավելացնելու ուղղությամբ.

37. «Աբովյան» ՔԿՀ-ի զբոսաբակերում սրեղծել բացօթյա զբոսանքի լիարժեք հնարավորություն՝ դրանք կահավորելով անբարենպաստ եղանակային պայմաններից պապոսպարվելու պարզաճ ծածկերով.

38. «Աբովյան» ՔԿՀ-ում նախատեսված զբոսանքի վայրերը կահավորել մարմնամարզությամբ, խաղերով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պարագաներով.

39. «Աբովյան» ՔԿՀ-ի մեկուսարանի մարզասրահում իրականացնել անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ՝ այն կահավորելով նոր մարզասարքերով.

40. մշակութային միջոցառումների պարզաճ կազմակերպման և իրականացման նպատակով «Աբովյան» ՔԿՀ-ի դահլիճում իրականացնել վերանորոգման աշխատանքներ.

41. բարելավել «Աբովյան» ՔԿՀ-ի գրադարանում պահվող գրքերի պահման պայմանները.

42. բարձրացնել զբաղվածության մակարդակը՝ ազատությունից զրկված անձանց ներգրավելով փարբեր բնույթի նպատակային զբաղմունքներում (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն).

43. քայլեր ձեռնարկել «Աբովյան» ՔԿՀ-ի մեկուսարանի հարևանությամբ շահագործվող զբոսաբակեր փանող ասփիճանավանդակը փեղաշարժման դժվարություններ ունեցող, ինչպես նաև մանկահասակ երեխաների կարիքներին հարմարեցնելու ուղղությամբ.

44. ապահովել «Աբովյան» ՔԿՀ տեսակցության եկած անձանց առանձնանալու հնարավորությունը միաժամանակյա կարճապահ տեսակցությունների կազմակերպման դեպքում.

45. երկարապահ տեսակցության սենյակներում, այդ թվում՝ դրանց սանհանգույցներում ապահովել պատշաճ պայմաններ.

46. ապահովել «Աբովյան» ՔԿՀ երկարապահ տեսակցության եկած անձանց, այդ թվում՝ անչափահասների համար, զբոսանքի դուրս գալու հնարավորություն.

47. «Աբովյան» ՔԿՀ-ի տեսակցությունների համար առանձնացված մանկական սենյակում իրականացնել կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ՝ այն ապահովելով փարբեր փարիքային խմբերի երեխաների համար խաղալիքներով և պարագաներով.

48. քայլեր ձեռնարկել ՔԿՀ-ներում տաքսոֆոնների սակագները նվազեցնելու ուղղությամբ.

49. ազատությունից զրկված օտարերկրացի անձանց իրավունքների պաշտպանության համար ապահովել վերջիններիս և ՔԿՀ-ի վարչակազմի միջև պատշաճ հաղորդակցվելու հնարավորությունը՝ թարգմանիչ ներգրավելու, զրուցարաններ մշակելու, թարգմանչական հատուկ սարքեր ձեռք բերելու կամ քրեակադրոնական համակարգի աշխատակիցների համար համապատասխան օտար լեզուների ուսուցման դասընթացներ կազմակերպելու միջոցով.

50. կազմակերպել հայերեն լեզվին չփորապետող ազատությունից զրկված անձանց հետ հաղորդակցությունը բժշկական օգնության տրամադրման և սպասարկման ընթացքում.

51. ազատությունից զրկված օտարերկրացի անձանց հասկանալի լեզվով պատշաճ իրազեկել իրենց իրավունքների ու պարտականությունների մասին՝ դրանք թարգմանելով համապատասխան լեզուներով.

52. կալանավորվածներին պահելու վայրերի և պատիժ կատարող հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին համապատասխան որոշման մշակման

փուլում նախատեսել ազատությունից զրկված օտարերկրացի անձանց տեսազանգի հնարավորությունից օգտվելու ողջամիտ հաճախականություն և տևողություն.

53. իրականացնել ՔԿՀ-ներում հոգեբանական ախտորոշիչ փաթեթների համալրում՝ անձի առավել բազմակողմանի ուսումնասիրության նպատակով.

54. ապահովել ազատությունից զրկված անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքներն արտացոլող փաստաթղթերի պարզաճ, բովանդակային լրացումը մասնագետների կողմից.

55. ՔԿՀ-ներում ձևավորել միջմասնագիտական համագործակցության մշակույթ և մշակել այդ համագործակցության ձևաթղթային համակարգ.

56. մշակել մեխանիզմներ ազատությունից զրկված կանանց և նրանց մոտ պահվող մինչև երեք տարեկան երեխաների հետ հոգեբանական աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ.

57. մշակել հոգեբանների աշխատանքային գործունեությունը կարգավորող ընթացակարգեր, վերանայել հոգեբանների աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ անդրադառնալով նաև նրանց սոցիալական երաշխիքներին, այդ թվում՝ աշխատավարձին.

58. աշխատանքներ իրականացնել բացասական հակում ունեցող անձանց հակումների նվազեցման ուղղությամբ և դրանք պարզաճ կերպով արձանագրել համապատասխան մարյանում.

59. սահմանել «բացասական հակում» հասկացությունը, ինչպես նաև քննարկման առարկա դարձնել որոշակի տեսակի հակումները (ագրեսիվության և կոնֆլիկտայնության) բացասական հակումների շարքին դասելու հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով անձի անհատական ռիսկայնության գործոնը.

60. անազատության մեջ գտնվող անձանց համար շարունակաբար զարգացնել և ավելացնել պարբերական, համակարգված և նպատակաուղղված դասընթացներն ու միջոցառումները (կրթական, մշակութային, սպորտային և այլն)՝

61. ապահովել միայնակ պահվող ազատությունից զրկված անձանց հետ բավարար շփումը.

62. նախատեսել ազատությունից զրկված անչափահաս անձանց համար նախատեսված առանձին խցեր՝ ապահովելով պահման պարզաճ պայմաններ.

63. քայլեր ձեռնարկել դպրոցի հիմնանորոգման և մաքրման աշխատանքներն իրականացնելու ուղղությամբ.

64. ապահովել քրեակարարողական հիմնարկում ազատությունից զրկված կանանց հետ անմիջական շփման մեջ գտնվող իգական սեռի քրեակարարողական ծառայողների բավարար հարաբերակցությունը.

65. հիմնովին բարելավել քրեակարարողական համակարգի ծառայողների սոցիալական երաշխիքների համակարգը, այդ թվում՝ աշխատավարձը.

66. «Աբովյան» ՔԿՀ-ի ծառայողների համար ապահովել պարզաճ աշխատանքային պայմաններ, ներառյալ՝ սանիտարահիգիենիկ և բավարար պայմաններով աշխատասենյակներ ու սանհանգույցներ, ինչպես նաև սննդի ընդունման համար անհրաժեշտ պայմաններ:

1. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

1. ԿԱՄ-ի իրականացրած այցի պահին «Աբովյան» ՔԿՀ-ում պահվել է ազատությունից զրկված 66 անձ (40 կալանավորված անձ և 26 դատապարտյալ): Ազատությունից զրկված 66 անձանցից 4-ը եղել են արական սեռի անչափահաս կալանավորված անձինք, իսկ մեկը՝ չափահաս: Վերջինս չափահաս է դարձել ՔԿՀ-ում պահվելու ընթացքում: Հարկ է ընդգծել, որ անչափահաս ազատությունից զրկված անձանց պահման պայմանները, որևէ կերպ չեն տարբերվել չափահասների պահման պայմաններից:

2. ՔԿՀ-ի որոշ հատվածներում շենքային պայմանները գտնվել են անբավարար և սանիտարահիգիենիկ անընդունելի վիճակում: Մասնավորապես, խնդրահարույց են եղել ՔԿՀ-ի դպրոցի, մեկուսարանի շենքային պայմանները, կարանտինային խցում, պատժախցում, միջանցքներում, բուժկետում, խցերում և աշխատասենյակներում խոնավության մակարդակը եղել է բարձր, դրանց պատերի և առաստաղների ծեփամածիկը եղել է թափված, որոշ տեղերում՝ քանդված և բորբոսնած: Նույն վիճակն է արձանագրվել նաև մեկուսարանի մարզասրահում, լվացքատանը և պահեստային սենյակում:



3. «Աբովյան» ՔԿՀ-ի շենքային պայմանները, մասնավորապես՝ մեկուսարանը և կանանց տեղամասը հարմարեցված չեն տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կարիքներին:

4. ՄԻՊ-ի ներկայացուցիչների հետ ունեցած առանձնագրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք հայտնել են, որ մեկուսարանի առաջին հարկի խցերում հաճախ են հանդիպում առնետներ և խավարասերներ:

5. Նշված հարցի կապակցությամբ ԱՆ-ը հայտնել է, որ «Աբովյան» ՔԿՀ-ում 2022 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ իրականացվում են հիմնանորոգման լայնածավալ աշխատանքներ, մասնավորապես՝ կապիտալ վերանորոգվել են անչափահասների տեղամասի խոհանոցը, ճաշարահը, սանհանգույցը և լոգարանը, դպրոցի և ակումբի սանհանգույցները: Ըստ ԱՆ-ի՝ հիմնովին փոխարինվում է մեկուսարանի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցը, աշխատանքներ են տարվում խցերի սանհանգույցների ջրագծերի և ջրահեռացման խողովակների փոխարինման ուղղությամբ, սանհանգույցների սալիկապատման, ասիական տիպի նոր զուգարանների և լվացարանների տեղադրման, ինչպես նաև միջանցքների և մեկ լոգասենյակի կապիտալ վերանորոգման ուղղությամբ:



6. Կանանց տեղամասը տեղակայված է ՔԿՀ-ի առանձնացված մասնաշենքում, որի երկրորդ հարկում առանձնացված են մեկ մեծ կացարան, մեկ երկտեղանոց սենյակ, ինչպես նաև վարսահարդարման սենյակ և գրադարան: Կանանց տեղամասի ընդհանուր կացարանում ԿԱՄ-ի մշտադիտարկման այցի պահին փաստացի պահվել է 12 կին դատապարտյալ: Դատապարտյալ կանանցից ևս երկուսը բնակվել են համատեղ՝ երկտեղանոց սենյակում, իսկ մեկը առանձին՝ մինչև 3 տարեկան երեխայի հետ: Խնդրահարույց է, որ թեև մշտադիտարկման այցի պահին գործող Քրեակատարողական

օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *կիսաբաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է մինչև վեց մարդու համար նախատեսված բնակելի կացարանում*, այնուամենայնիվ այցի պահին օրենսդրական պահանջը փաստացի ապահովված չի եղել: Ավելին, 2022 թվականի հուլիսի 1-ից գործող նոր Քրեակատարողական օրենսգրքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում* (Քրեակատարողական օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված անցումային դրույթների համաձայն՝ *կիսաբաց ուղղիչ հիմնարկում պարիժ կրող դատապարտյալների պարժի կատարման պայմանները համապատասխանեցվում են միջին անվտանգային գոտու մեղմ պայմանների համար նախատեսված պայմաններին*) *դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված բնակելի կացարանում*:

7. ՄԻՊ-ը տարիներ շարունակ իր տարեկան և արտահերթ զեկույցներում բարձրացրել է կանանց տեղամասի ընդհանուր կացարանի օրվա հերթապահ պատասխանատուների հսկիչ կետից ապակե միջնորմով առանձնացված լինելու հարցը: Թեև ՄԻՊ-ի կողմից վերոնշյալ հարցի բարձրացումից հետո ապակե միջնորմը ներկվել է՝ նվազեցնելով ՔԿՀ-ի վարչակազմի կողմից կացարանի անմիջական և մշտական դիտարկման հնարավորությունը, այնուամենայնիվ, նման դիտարկման ենթարկվելու ռիսկերը շարունակում են մնալ:

8. «Աբովյան» ՔԿՀ-ում բացակայում են հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար հատուկ նախատեսված խցերը կամ կացարանները: Ավելին, ՔԿՀ-ի կողմից չեն ապահովվում նրանց առանձնահատկություններին համապատասխան պայմաններ: ԿԱՄ-ը մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրել է, որ ՔԿՀ-ում պահվել է իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող երեք կին, որոնցից երկուսը՝ մեկուսարանում, իսկ մեկը՝ կանանց տեղամասում: Մեկուսարանում պահվող նշված կանանց պահման պայմանները առանձնապես չեն տարբերվել ազատությունից զրկված մյուս անձանց պայմաններից: Նրանց խցերը կահավորված չեն եղել երեխայի խնամքի առանձնահատուկ պահանջներին համապատասխան. խցերում բացակայել է, օրինակ, երեխայի օրորոց կամ մանկական

մահճակալ, առկա չեն եղել տաք ջուր, երեխայի խնամքի համար կահավորված լոգարան և սանհանգույց, առանձին կահավորված խաղահրապարակով զբոսաբակ, ինչպես նաև երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջ զարգացմանը նպաստող միջավայր: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն¹ որոշման հավելվածի 79-րդ կետը սահմանում է, որ *հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում տեղավորվում են այնպես, որպեսզի հնարավորինս նվազագույնի հասցվի այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալների հետ շփումը*: Այսպիսով, չի ապահովվել օրենսդրական պահանջը, ինչը խիստ անընդունելի է:

9. ՄԻՊ-ը մտահոգիչ է համարում, որ «Աբովյան» ՔԿՀ-ում բացակայում են հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար հատուկ նախատեսված խցեր կամ կացարաններ, չեն ապահովվում նրանց վիճակի առանձնահատկություններին համապատասխան պայմաններ:



¹ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշում:

2. ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՉՆՆՈՒԹՅՈՒՆԸ

10. ԿԱՄ-ի ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ ՔԿՀ-ի բժշկական սպասարկման բաժինն աշխատում է ծանրաբեռնված գրաֆիկով: Ոչ աշխատանքային ժամերին բժշկական ծառայությունը դժվար հասանելի է, քանի որ մեկ հերթապահ բուժքույրը սպասարկում է երկու տեղամաս, ինչպես նաև իրականացնում է ատամնաբուժական գործիքների ախտահանում: Ավելին, մշտադիտարկման այցի դրությամբ՝ բժշկական անձնակազմում չի եղել ընդհանուր պրոֆիլի բժիշկ՝ թերապևտ կամ ընտանեկան բժիշկ, ինչի պատճառով թերապևտիկ բնույթի բուժօգնություն տրամադրվել է Ստորաբաժանման այլ մասնագիտացում ունեցող բժիշկների կողմից:

11. Մեկ այլ խնդրահարույց և անընդունելի պրակտիկա է արձանագրվել, երբ ազատությունից զրկված անձանց դեղորայքային բուժումն իրականացվում է բուժքրոջ կողմից՝ առանց բժշկի համապատասխան ցուցումի: Օրինակ՝ ազատությունից զրկված անձի նկատմամբ, ըստ «Դեղերի հատկացման և ընդունման» մատյանի, 2022 թվականի հունիս 6-ից 12-ը ներառյալ, իրականացվել է «Խոնդրա-Ջեկտի» 2մլ-ից ամենօրյա ներարկումներ, սակայն վերջինիս բժշկական քարտում բժշկի կողմից համապատասխան ցուցումը բացակայել է, ինչպես նաև բացակայել են պացիենտի գանգատները, օբյեկտիվ զննության արդյունքները և դեղորայքային բուժում իրականացնելու հիմքերը:

12. «Դեղերի հատկացման և ընդունման» մատյանի ուսումնասիրությամբ արձանագրված ազատությունից զրկված անձանց տրամադրված դեղորայքի և վերջիններիս բժշկական քարտերում դրանք տրամադրելու հիմքերի համադրությամբ պարզվել է, որ բազմաթիվ դեպքերում ազատությունից զրկված անձին բուժման կուրս է նշանակվում առանց բժշկի զննության և համապատասխան ցուցման: **ՄԻՊ-ն իր խիստ մտահոգությունն է հայտնում նմանատիպ պրակտիկայի վերաբերյալ և հորդորում է բացառել առանց համապատասխան բժիշկ մասնագետի ցուցման ցանկացած տեսակի բժշկական միջամտությունների ու ծառայությունների տրամադրումը:**

13. Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող ազատությունից զրկված անձինք կցագրված են «Աբովյան» բժշկական

կենտրոնին՝ արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով: ՔԿՀ-ում ծնողների հետ գտնվող մինչև երեք տարեկան երեխաները կցագրված են «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ին, որտեղ էլ իրականացվում է նրանց ամբուլատոր բժշկական սպասարկումը:

14. Ազատությունից զրկված կանանց և անչափահասների նեղ մասնագիտական խորհրդատվությունները կազմակերպվում են «Աբովյան» բժշկական կենտրոնում արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում՝ համապատասխան ուղեգրերով:

15. ԿԱՄ-ի մշտադիտարկման ժամանակ արձանագրվել է, որ ՔԿՀ-ի բոլոր երեք մասնաշենքերում (մեկուսարան, անչափահասների և կանանց տեղամաս) առանձնացված են եղել բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով աշխատասենյակներ:

16. Շարունակում է չլուծված մնալ կանանց տեղամասում առանձնացված բժշկական սպասարկման աշխատասենյակների հոսող ջրով և սանհանգույցով ապահովված չլինելու հարցը:

17. ՄԻՊ-ն իր տարեկան և արտահերթ զեկույցներում բազմից բարձրացրել է ազատությունից զրկման վայրերում դեղերի պատշաճ պահպանման և ժամկետանց դեղերի կիրառման հետ կապված խնդիրներ: ԿԱՄ դիրքորոշումը միանշանակ է այս հարցում՝ պետք է բացառվի ժամկետանց կամ ժամկետն անհայտ դեղորայքի տրամադրումը, ինչպես նաև խիստ հսկողություն սահմանվի դեղերի պատշաճ պահպանման և տրամադրման գործընթացում: Այս կապակցությամբ մտահոգիչ փաստ է արձանագրվել կանանց տեղամասի բժշկական օգնության և սպասարկման համար նախատեսված սենյակում: Վերոնշյալ սենյակում՝ աշխատասեղանին, բժշկական սկուտեղի վրա, 2022 թվականի հունիսի 13-ի կատարված մշտադիտարկման այցի ընթացքում առկա է եղել դեղորայք՝ «Արիտմիլ»՝ դեղաթիթեղի ծածկույթը վնասված, դեղահաբը բաց վիճակում և օգտագործման համար ոչ պիտանի: Ինչպես նաև 2022 մարտի 16-ին Ստորաբաժանման ատամնաբուժական օգնության համար առանձնացված սենյակում, մետաղյա պահարանում, առկա է եղել ժամկետանց «Էնդոֆիլ» լիցքանյութ և մի շարք այլ

դեղամիջոցներ, որը պահվել է պիտանելիության ժամկետի մեջ գտնվող այլ դեղամիջոցների, լիցքանյութերի և ատամնաբուժական պարագաների հետ մեկտեղ՝ առանց որևէ տարբերակող նշումների: «Էնդոֆիլ» լիցքանյութի պիտանելիության ժամկետը լրացած է եղել այցից 6 ամիս առաջ՝ 2021 թվականի սեպտեմբեր ամսին:



18. 2022 թվականի հունիսի 13-ին մշտադիտարկման այցի շրջանակներում ուսումնասիրվել են նաև խոտանման ենթակա դեղորայքի առկայությունը, դրանց խոտանման մեխանիզմները, բժշկական այլ թափոնների խոտանումը: Արձանագրվել է, որ դեռևս 2022 թվականի մարտի 16-ին ԿԱՄ-ի կողմից իրականացրած այցի ընթացքում արձանագրված խոտանման ենթակա ժամկետանց դեղորայքը խոտանված չի եղել, թեև այս անգամ եղել է առանձնացված, ակտավորված և պահվել է Ստորաբաժանման առանձնացված սենյակում:

19. Ինչ վերաբերում է բժշկական սրածայր թափոնների հավաքման և խոտանման գործընթացներին, անհրաժեշտ է նկատել, որ ՔԿՀ-ում կուտակվող բժշկական սրածայր թափոնները հավաքվել են պլաստմասե տարայի մեջ՝ բերանը բաց վիճակում: Թափոնների հետագա ոչնչացման գործընթացի վերաբերյալ բժշկական անձնակազմը տեղեկացված չի եղել, ինչը ողջամիտ մտահոգությունների տեղիք է տալիս:

20. Այս կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը

հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված) 21-րդ կետի համաձայն՝ սրածայր թափոնները, դրանց գոյացման վայրում, օգտագործելուց անմիջապես հետո տեղադրվում են մեկանգամյա օգտագործման կարծր (օրինակ՝ պլաստիկ շերտի, մետաղյա կամ կարծր պլաստմասե բեռնարկղի մեջ)՝ կենսաբանական վրանգի նշանը և «Զգույշ սրածայրեր» մակնշումը կրող տարրողությունների մեջ: Արգելվում է տեղադրելուց առաջ ներարկիչների ասեղների կրկնակի փակելը կափարիչով և (կամ) ախտահանելը:

Հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ բոլոր տեսակի բժշկական թափոնները տարրողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, ինչից հետո բժշկական թափոնի հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողը լրացնում է պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, դրա՝ տարրողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը: Լրացված պիտակն ամրացվում է տարրողությանը, որն անմիջապես տեղափոխվում է բժշկական թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք: Լրացված պիտակը տարրողությունից տարանջատվելու հնարավորությունը բացառվում է:



21. Շարունակում է մտահոգիչ մնալ ազատությունից զրկված անձանց դեղորայքի տրամադրման գործընթացի կազմակերպումը, երբ ազատությունից զրկված անձանց դեղորայքի ընդունումն իրականացվում է հերթապահ պատասխանատուի տեսադաշտում և լսելիության սահմաններում, **ինչը կոպտորեն ոտնահարում է ազատությունից զրկված անձանց բժշկական գաղտնիքի պահպանման իրավունքը: ԿԱՄ-ը կոչ է անում իրավասու մարմիններին քայլեր ձեռնարկել համապատասխան մեխանիզմներ մշակելու և ազատությունից զրկված անձանց բժշկական գաղտնիքի իրավունքն անխոչընդոտ ապահովելու համար:**

22. ԿԱՄ-ի ներկայացուցիչներն ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների ժամանակ արձանագրել են իրենց մոտ պահվող դեղորայքի հետ կապված խնդրահարույց պրակտիկա: Մասնավորապես, հերթապահ բուժքույրը որոշ դեղամիջոցներ տրամադրում է ազատությունից զրկված անձանց՝ իրենց մոտ պահելու և սնվելուց հետո կամ ցուցված ժամին այն ընդունելու նպատակով: Սակայն, երբեմն ՔԿՀ-ի անվտանգության աշխատակիցներն արգելում են ազատությունից զրկված անձանց իրենց մոտ դեղորայք ունենալ: Ավելին, պահվող դեղորայքի հայտնաբերման պարագայում ազատությունից զրկված անձին կարգապահական տույժի են ենթարկում՝ դիտարկելով ամենօրյա ընդունման դեղորայքը որպես արգելված իր: Ազատությունից զրկված անձանց նկատմամբ հնարավոր տույժերի կիրառումից խուսափելու նպատակով բժշկական անձնակազմը ցուցված դեղորայքը չի տրամադրում վերջիններիս, ինչը լրացուցիչ ծանրաբեռնվածություն է բժշկական անձնակազմի համար: Հարկ է ընդգծել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի համաձայն՝ *քրոնիկական հիվանդությունների դեպքում, երբ դեղի ընդունումը կրում է մշտական բնույթ, բժշկական ստորաբաժանման բժշկի կողմից նշանակման դեղատոմսի հետ միասին 5 օրվա համար նախատեսված դեղը կարող է տրամադրվել կալանավորված անձին կամ*

դատապարտյալին՝ բացառությամբ թմրամիջոցների և հոգեմեդ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի: Այսպիսով, չի պահպանվում օրենսդրական պահանջը, ինչի արդյունքում խախտվում է ազատությունից զրկված անձի պատշաճ բժշկական ծառայություն և սպասարկում ստանալու իրավունքը: **Նման պրակտիկան անընդունելի է:**

23. Մշտադիտարկման այցի շրջանակներում ուսումնասիրվել է նաև ազատությունից զրկված անձանց ազգականների կողմից բերվող դեղորայքի շրջանառությունն ու դրանց ընդունման համար անհրաժեշտ բժշկական ցուցման առկայությունը: Այսպես, թեև ազգականների կողմից բերվող դեղորայքը գրանցվում է համապատասխան մատյանում, սակայն բացակայում է կոնկրետ դեղամիջոցի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ բժշկական ցուցումը ազատությունից զրկված անձի բժշկական փաստաթղթերում:

24. Խիստ մտահոգիչ է անչափահաս և մանկահասակ երեխաների առաջին բժշկական օգնության համար նախատեսված դեղամիջոցների (օրինակ՝ ջերմիջեցնողների) բացակայությունը: ՄԻՊ-ի ներկայացուցիչներին տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ըստ անհրաժեշտության մանկահասակ երեխաներին տրամադրվում է մեծահասակների համար նախատեսված դեղորայք, օրինակ՝ «Պարացետամոլ» հաբի ½ կամ ¼ չափաբաժին: Իսկ մանկաբույժի կողմից նշանակված դեղորայքը հիմնականում տրամադրում է «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հարցի կապակցությամբ ՄԻՊ-ի հարցմանն ի պատասխան՝ ԱՆ-ը դեռևս 2022 թվականի հունիսի ամսին ներկայացրել է պարզաբանումներ առ այն, որ մանկահասակ երեխաներին դեղորայքի տրամադրումը կատարվում է նշված պոլիկլինիկայում, իսկ անհրաժեշտության դեպքում, մասնավորապես՝ մարմնի ջերմաստիճանի բարձրացման դեպքում, հրավիրվում է շտապ օգնություն, որը երեխաներին տեղափոխում է մասնագիտացված մանկական բժշկական հաստատություն՝ գործնականում առկա են անհրաժեշտ երաշխիքներ մանկահասակ երեխաների առողջության պահպանման իրավունքն իրացնելու նպատակով:

25. Մինչդեռ, առանձնագրույցների ընթացքում պարզվել է, որ երեխաները տեղափոխվում են մասնագիտացված բժշկական կենտրոններ միայն առողջական վիճակի էլ ավելի վատթարացման պարագայում, մինչ այդ տրամադրվում է մեծահասակների

համար նախատեսված կամ Ստորաբաժանման դեղատանն առկա դեղորայքի փոքր չափաբաժնով:

26. Ինչ վերաբերում է ՀՀ արդարադատության նախարարության վերոգրյալ գրությամբ ներկայացված մեկ այլ պնդմանը, ըստ որի՝ ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող օրենսդրությամբ սահմանված բժշկական ծառայությունների ամբողջական շրջանակը ներառում է միայն կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնությունը և սպասարկումը՝ մատնանշելով ՀՀ օրենսդրությունը, այդուամենայնիվ՝ չպետք է անտեսել, որ նույն ՀՀ օրենսդրությունն է սահմանում կարգավորումներ առ այն, որ ազատությունից զրկված անձանց հետ կարող են ՔԿՀ-ում պահվել իրենց մինչև երեք տարեկան երեխաները, ուստի պետության պոզիտիվ պարտավորությունն է իր հոգածության ներքո գտնվող և ՔԿՀ-ում բնակվող մինչև երեք տարեկան երեխաների բժշկական օգնությունն ու սպասարկումը ևս կազմակերպել պատշաճ՝ ընդհանուր հիմունքներով, այդ թվում՝ օրենսդրական կարգավորումները համապատասխանեցման միջոցով:

27. Այսպիսով, ազատությունից զրկված անչափահաս անձինք և ՔԿՀ-ում ծնողների հետ բնակվող երեխաները զրկված են դեղորայքային միջամտություն պահանջող առաջին բժշկական օգնության պատշաճ կազմակերպման հնարավորությունից:

28. Բժշկական օգնությունը և սպասարկումը «Աբովյան» ՔԿՀ-ում թերանում է նաև ազատությունից զրկված կանանց գինեկոլոգիական առաջնային զննության և հետազոտությունների ապահովման առումով: Չնայած, որ ՔԿՀ-ի անչափահասների տեղամասում առանձնացված է գինեկոլոգիական կաբինետ, սակայն այն բավարար կահավորված չէ, առկա չեն գինեկոլոգիական առաջնային զննության անհրաժեշտ գործիքներ և պարագաներ, ինչպիսիք են, օրինակ՝ հեշտոցային քսուքների հետազոտության կազմակերպման համար անհրաժեշտ առարկայական ապակիները, Ֆոլկմանի գդալը և այլն: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական

ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային (մասնագիտացված) բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 1936-Ն որոշման հավելված 3-ի 3-րդ կետը նշված պարագաները և գործիքներն ունենալը գինեկոլոգիական կաբինետի համար պարտադիր է համարում:

29. Գինեկոլոգիական զննության և հետազոտությունների համար անհրաժեշտ պարագաների և գործիքների բացակայությունը խոչընդոտ է պատշաճ գինեկոլոգիական ծառայությունների մատուցման համար:

30. Մշտադիտարկման այցի ժամանակ ուսումնասիրվել են նաև գինեկոլոգի այցելությունների արձանագրման մատյանում կատարված գրառումները: Համեմատական ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տարիներին ազատությունից զրկված անձանց շրջանում գինեկոլոգի մոտ հաճախումները բավականին ցածր են: Այսպես, 2021 թվականին գինեկոլոգիական զննության է ենթարկվել 10 անձ, իսկ 2022 թվականի առաջին կիսամյակում՝ 7 անձ: Հատկանշական է, որ 2019 թվականին գինեկոլոգիական զննության է ենթարկվել ազատությունից զրկված 37 կին:

31. Այախոսվ, անհրաժեշտ է խորքային ուսումնասիրել և մշակել մեխանիզմներ գինեկոլոգիական ծառայությունների ամբողջական և արդյունավետ կազմակերպումն ապահովելու համար:

32. ՄԻՊ-ը բազմիցս ընդգծել է, որ պետք է առանձնակի ուշադրություն դարձնել ազատությունից զրկման վայրերում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման հարցերին, քանի որ վերջիններս առավել խոցելի են: Ստորաբաժանման աշխատանքներում ներգրավված է հոգեբույժ, որը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժումը նշանակում է վերջիններիս համաձայնությունն առաջին և միակ անգամ ստանալու պարագայում: Սակայն, փաստաթղթերի ուսումնասիրությունները փաստում են, որ ազատությունից զրկված անձի բուժումից գրավոր հրաժարվելու կամ պարբերաբար դեղորայք ընդունելուց բանավոր հրաժարվելու դեպքերում ազատությունից զրկված անձի բուժումն ընդհատելու,

դադարեցնելու կամ ոչ հոժարական բուժման ընթացակարգ սկսելու հարց չի քննարկվում և չի նախաձեռնվում: Ավելին, հոգեբույժի նշանակած դեղորայքային բուժումից հրաժարվելուց կամ ավարտելուց հետո վերսկսվող բուժման համար ևս ազատությունից զրկված անձից իրազեկված գրավոր համաձայնություն չի ստացվում:

33. Այսպիսով, չեն պահպանվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց նկատմամբ յուրաքանչյուր անգամ բուժում սկսելու կապակցությամբ վերջիններիս իրազեկված համաձայնության պատշաճ ստացումը և դրա իրականացման նկատմամբ հսկողությունը: Ավելին, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝ *մարդու գրավոր համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացառությամբ սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, այն է՝ Կառավարության սահմանած կարգով՝ մարդու կյանքին սպառնացող վտանգի դեպքում և շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով:*

34. ՔԿՀ-ում մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ որոշ դեպքերում ազատությունից զրկված անձանց նկատմամբ բժշկական միջամտություններն իրականացվում են առանց այդ անձանց գրավոր համաձայնության, ինչն անթույլատրելի է և հակասում է օրենսդրության պահանջներին:

35. Մտահոգիչ են նաև բժշկական գործիքների ախտահանման գործընթացի կազմակերպումն ու դրանց պահման պայմանները: Ստորաբաժանման բժշկական գործիքների և պարագաների հաշվեկշռում առկա են ախտահանիչ սարքեր, սակայն դրանցից օգտվելու և ախտահանված գործիքների պահման վերաբերյալ համապատասխան կանոնակարգերի և ուղեցույցների բացակայության պատճառով դրանց պատշաճ կատարումը չի վերահսկվում:

36. Բժշկական գործիքների ախտահանման նկատմամբ պատշաճ հսկողության բացակայությունը չի բխում վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված հիմնական միջոցառումների կազմակերպման ընթացակարգերից:

37. Պաշտպանի ներկայացուցիչների կողմից մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել են ՔԿՀ-ում պահվող օտարերկրացիների բժշկական զննության դժվարություններ՝ հիմնականում լեզվական խոչընդոտով պայմանավորված: Նշված անձինք չեն կարողանում ներկայացնել իրենց գանգատները և ստանալ պատշաճ բժշկական խորհրդատվություն: Հայերենին չտիրապետող ազատությունից զրկված անձանց լեզվական խոչընդոտներին և դրա արդյունքում ծագող խնդիրներին ավելի մանրամասն անդրադարձ է կատարվել սույն զեկույցի հետագա բաժիններում:

38. Մեկ այլ խնդիր է ազատությունից զրկված անձանց նկատմամբ ոչ պատշաճ դիսպանսեր հսկողության իրականացումը, մասնավորապես՝ քրոնիկ հիվանդություններ ունեցող ազատությունից զրկված անձանց պատշաճ հաշվառման և հսկողության բացակայությունը: Այս կապակցությամբ, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման հավելվածի 115-րդ կետով սահմանվում է դիսպանսեր հսկողության ծավալների ապահովումը, ինչը համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրությամբ չի պահպանվել:

39. Ազատությունից զրկված անձանց դիսպանսեր հսկողության ոչ պատշաճ իրականացումը կարող է հանգեցնել քրոնիկ հիվանդությունների անվերահսկելի զարգացման և ծանր հետևանքների:

40. ՄԻՊ-ի ներկայացուցիչներին տրամադրված տեղեկությունների համաձայն՝ հիվանդությունների կանխարգելման նպատակով ՔԿՀ ընդունվելիս կամ այնտեղ պահվելու ընթացքում կանայք և անչափահասները տարվա մեջ մեկ անգամ ենթարկվում են սքրինինգային հետազոտությունների, որոնք իրենց մեջ ներառում են անձի ֆիզիկական, հեմոդինամիկ տվյալների, օբյեկտիվ զննության, լաբորատոր քննության և խորհրդատվական բաժիններ: Ուսումնասիրված «տարեկան կանխարգելիչ այցերի իրականացման թերթիկները» փաստում են, որ տարեկան կանխարգելիչ միջոցառումները ամբողջ ծավալով չեն իրականացվում, ինչը մտահոգիչ է:

41. Ստորաբաժանման բժշկական անձնակազմի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ՔԿՀ ընդունվելիս ազատությունից զրկված անձանց մոտ պարտադիր կերպով իրականացնում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ, սիֆիլիսի, հեպատիտ «Յ» և կորոնավիրուսային վարակի

հայտնաբերման հետազոտություններ: Սակայն, լաբորատոր հետազոտությունների հաշվառման մատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված հետազոտություններն իրականացվում են ազատությունից զրկված անձի՝ ՔԿՀ ընդունվելուց տևական ժամանակ անց՝ որոշ դեպքերում մինչև 1 ամիս և ավել ժամանակահատվածում, ինչը մտահոգության տեղիք է տալիս և չի բխում վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված նպատակից:

42. Մտահոգիչ է, որ Ստորաբաժանում դեռևս չեն իրականացվում վերոնշյալ վարակների նկատմամբ պարբերական հետազոտություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի ՔԿՀ ընդունվելիս գաղտնի շրջանում հետազոտված և բացասական արդյունքներ ստացած դեպքերը հետագայում հայտնաբերել: Ստացված տեղեկությունների համաձայն՝ միայն կորոնավիրուսային հետազոտություններն են իրականացվում ամեն անգամ ազատությունից զրկված անձի ՔԿՀ մուտքի ժամանակ, օրինակ՝ դատական նիստից կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկից վերադառնալիս:

43. Խնդրահարույց է նաև ՔԿՀ ընդունվող ազատությունից զրկված անձանց մոտ նախնական բժշկական զննության իրականացման գործընթացը: Այսպես, ՔԿՀ մուտք գործելիս ազատությունից զրկված անձինք նախնական (արտաքին) բժշկական զննության են ենթարկվում հսկիչ-անցագրային կետի առանձնացված սենյակում: Վերոնշյալ սենյակն ունի մոտ երկու մետր քառակուսի տարածք, չունի պատուհան՝ բնական լուսավորություն ապահովելու համար, և բժշկական զննության իրականացման համար պատշաճ կահավորված չէ: Նախնական բժշկական զննությունը կատարում է Ստորաբաժանման բուժքույրը: Վնասվածքների հայտնաբերման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն համապատասխան մատյանում: Վնասվածքների մասին արձանագրության պարագայում, ըստ բժշկական անձնակազմի, այն տրամադրվում է ՔԿՀ-ի հետաքննիչին: Մինչդեռ, իրավական կարգավորումների համաձայն՝ Ստորաբաժանման բժշկական անձնակազմը հետաքննիչին նշված տեղեկությունը փոխանցելու պարտավորություն չունի, այլ վնասվածքների մասին կազմված արձանագրությունը պետք է ուղարկի իրավապահ մարմնին:

44. Ստորաբաժանումում վարվում է «ՔԿՀ-ից դուրս բերվող և մուտք գործող դատապարտյալների և կալանավորված անձանց» բուժզննման մատյան, որտեղ արձանագրվում է անձի առողջական վիճակը, օրինակ՝ «բավարար», և երբեմն նշվում է միայն այն առողջապահական մարմինների բուժական հիմնարկի անվանումը, որտեղ տեղափոխվում է ազատությունից զրկված անձը, նրա դուրս բերման ու վերադարձի ամսաթիվն ու ժամը: Նման մոտեցումը հնարավորություն չի տալիս առավել մանրամասն և համակողմանի տեղեկություններ ստանալ անձին առողջապահական մարմինների բուժական հիմնարկ տեղափոխելու կոնկրետ դեպքի հանգամանքների և մանրամասների մասին, ինչն էլ իր հերթին հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ դեպքի արդյունավետ քննության համար:

45. Բժշկական զննության մատյանների ուսումնասիրությամբ պարզվել է, որ նույնիսկ աշխատանքային օրերին և ժամերին բժշկական զննությունն իրականացնում են միայն բուժքույրերը: Այս կապակցությամբ, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի համաձայն՝ *բժշկական զննությունն իրականացնում են ՊՈԱԿ-ի բժիշկները*: ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի ապրիլի 21-ի թիվ 163-Լ հրամանի հավելվածի 1-ին մասի համաձայն՝ *խոշտանգման կամ վարչական վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթուղթը լրացնում է բժշկական զննություն իրականացնող բժիշկը, իսկ ոչ աշխատանքային օրերին և ժամերին կամ բժշկի բացակայության դեպքում՝ հերթապահություն իրականացնող միջին բուժանձնակազմի ներկայացուցիչը՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի մոտ խոշտանգման կամ վարչական վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված ենթադրյալ դեպքերի փաստաթղթավորման նպատակով*:

46. Մշտադիտարկման այցերի ընթացքում տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ՔԿՀ ընդունվող ազատությունից զրկված անձի մոտ վնասվածքներ հայտնաբերելու պարագայում երբևէ չեն արձանագրվել դրանք ենթադրյալ բռնության հետևանքով ստանալու դեպքեր և համապատասխան ընթացակարգեր չեն նախաձեռնվել: Սակայն, առանձնագրույցների ընթացքում, ինչպես նաև համապատասխան մատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՔԿՀ ընդունվելիս՝ առնվազն մեկ դեպքով,

ազատությունից զրկված անձի մոտ հայտնաբերվել է վնասվածքներ և վերջինս հայտարարել է, որ դրանք ստացել է ձերբակալման ընթացքում կիրառված անհամաչափ ուժի արդյունքում: Թեև արված հայտարարությանը՝ Ստորաբաժանման կողմից համապատասխան արձանագրություն չի կազմվել: Ավելին, արձանագրություն կազմվել է միայն ԿԱՄ-ի աշխատակիցների կողմից դեպքը բարձրաձայնելուց հետո՝ փաստացի մարմնական վնասվածքը հայտնաբերելուց 63 ժամ անց:

47. Խոշտանգումների կանխարգելման տեսանկյունից խիստ մտահոգիչ է նաև ազատությունից զրկված անձանց մոտ վնասվածքների ոչ պատշաճ արձանագրումը՝ դրանց անատոմիական ոչ համապարփակ նկարագրությունը, ստացման պատճառների մասին տեղեկություններ չհավաքագրելը, բժշկական զննության իրականացման ժամի և ստացված վնասվածքների ամբողջական նկարագրության և դրանց համեմատական գնահատման բացակայությունը, ինչպես նաև իրավապահ մարմիններին չփոխանցելու անթույլատրելի պրակտիկան:

48. Հարկ է ընդգծել, որ ազատությունից զրկման վայրերում իրականացվող բժշկական զննությանը խոշտանգումների կանխարգելման կարևորագույն միջոցառումներից մեկն է, և խիստ կարևոր է հետևել և պահպանել օրենսդրության պահանջներն ու ընթացակարգերը:

49. Այսպիսով, չեն պահպանվում օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը, ինչը չի բխում խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դեպքերի կանխարգելման հիմնարար նպատակից: ՄԻՊ-ն իր խորին մտահոգությունն է հայտնում վերոնշյալ դեպքի կապակցությամբ և կոչ է անում արմատապես բացառել նման պրակտիկան:

3. ԿԱՆԱՆՑ ԵՎ ՄԱՅՐԵՐԻ ՀԵՏ ՊԱՀՎՈՂ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՏԱՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

50. ՄԻՊ-ը՝ որպես ԿԱՄ, սույն գլխում մանրամասն անդրադարձ է կատարել մայրերի հետ պահվող մինչև 3 տարեկան երեխաների պահման պայմաններին և նրանց նկատմամբ վերաբերմունքին: Նշվածը պայմանավորված է ՔԿՀ-ում ազատությունից զրկված կանանց


մոտ մանկահասակ երեխա պահելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հնարավորությամբ և դրա հաշվառմամբ՝ երեխայի լավագույն շահի պահպանման կարևորությամբ: Մանկահասակ երեխաների իրավունքներին առնչվող հարցերին առանձին-առանձին անդրադարձ կկատարվի սույն զեկույցի տարբեր բաժիններում:

Սննդի կազմակերպում

51. Իրականացված մշտադիտարկման այցերի ընթացքում ԿԱՄ-ի ներկայացուցիչներն ուսումնասիրել են ՔԿՀ-ում ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի որակը, չափաբաժինները և պահման պայմանների սանիտարահիգիենիկ վիճակը: 2020 թվականի հունիսի 1-ից բոլոր ՔԿՀ-ներում ազատությունից զրկված անձանց սննդի տրամադրման գործընթացն իրականացվում է մասնավոր ընկերության՝ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից: Հարկ է նշել, որ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից տրամադրվող սնունդը ՔԿՀ է բերվում ընդհանուր մեծ տարաներով, ինչից հետո ՔԿՀ-ում այն կշռվում է և ընդունվում: Սակայն, խիստ մտահոգիչ է, որ սնունդն ընդունելիս չի իրականացվում որևէ վերահսկողություն սննդի որակի, սննդի էներգետիկ արժեքի, տեղափոխման և պահպանման սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ:

52. ՔԿՀ-ներ ընդունվող պատրաստի սննդի պատշաճ վերահսկողության մեխանիզմների և դրանց օրենսդրական կարգավորումների բացակայությունը կարող է հանգեցնել տարատեսակ խախտումների՝ սննդի որակի, էներգետիկ արժեքի, ինչպես նաև սննդի տեղափոխման և պահպանման սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված: Այս առումով անվիճելի է, որ ինչպես թերի իրավակարգավորումները, այնպես էլ առանցքային նշանակություն ունեցող հարցերում վերահսկողության մեխանիզմների բացակայությունը չպետք է հանգեցնեն այնպիսի խախտումների, որոնք էլ իրենց հերթին կարող են խախտել անազատության մեջ գտնվող անձանց իրավունքները: ԿԱՄ-ը կոչ է անում իրավասու մարմիններին քայլեր ձեռնարկել ներդնելու սննդի վերահսկողության այնպիսի մեխանիզմներ ու ընթացակարգեր, որոնցով կապահովվի սննդի պատշաճ մատուցման ստուգումը:

53. ԿԱՄ-ի ներկայացուցիչների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք իրենց դժգոհությունն են հայտնել ՔԿՀ-ում տրամադրվող սննդի համի, որակի, արտաքին տեսքի, քանակի, բազմազանության բացակայության և չափաբաժինների անհամաչափության կապակցությամբ:



54. ԿԱՄ-ը խիստ մտահոգիչ է համարում այն, որ ազատությունից զրկված կանանց հետ պահվող մինչև երեք տարեկան մանկահասակ երեխաներին սննդով ապահովելու գործընթացում չեն պահպանվել օրենսդրությամբ սահմանված սննդի համապատասխան չափաբաժիններն ու տեսականին: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ *իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք ապահովվում են մանկական սնունդով, և նրանց երեխայի խնամքի համար տրամադրվում է հագուստ, կոշիկներն ու փափուկ գույք՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշմամբ սահմանված չափաբաժիններով և ժամկետներով՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 9 հավելվածների*: Մինչդեռ, երեխաներին սնունդ է տրամադրվել՝ հիմք ընդունելով «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի մանկաբույժի կողմից տրամադրված, առողջապահական ոլորտում ընդունված և տարիքային առանձնահատկություններով պայմանավորված սննդամթերքի ցանկը, որը Ստորաբաժանման բժշկի համապատասխան գրությամբ նախատեսված է եղել իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող ազատությունից զրկված կանանցից

միայն մեկի համար: Ավելին, երեխաներին սնունդը տրամադրվել է օրական նույն պարբերականությամբ՝ հաշվի չառնելով նրանց տարիքային առանձնահատկությունները: Ըստ ստացված տեղեկությունների՝ երեխաներին տրամադրվում է գրեթե նույն սնունդը, ինչ մեծահասակներին, երբեմն, լրացուցիչ տրամադրվում է միրգ, կաթ, հազվադեպ՝ նաև կաթնաշոռ և թթվասեր: **Նման մոտեցումը խիստ մտահոգիչ է:** Ավելին, տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ մինչև երեք տարեկան երեխաներին տրամադրվող սննդի՝ ՀՀ կառավարության 2007 թվականի 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշման համապատասխան հավելվածներով սահմանված օրական նվազագույն չափաբաժինները հիմնականում չեն պահպանվել (օրինակ՝ հացի օրական նվազագույնը 50գ-ի փոխարեն տրամադրվել է 22գ, կարտոֆիլի օրական նվազագույն 180գ-ի փոխարեն՝ 83գ և այլն): Հատկանշական է նաև, որ ներկայացված սննդակարգը սահմանված է եղել տարբեր տարիքային խմբերի երեխաների համար, ինչը չի համապատասխանել վերը նշված որոշմամբ նախատեսված տարիքային խմբերին: Վերոնշյալ հարցը բարձրացվել է նաև 2022 թվականի մարտի 16-ին «Աբովյան» ՔԿՀ կատարված այցի շրջանակներում: Հարկ է նշել, որ այցի արդյունքում արձանագրված խնդիրների կապակցությամբ գրություն է հասցեագրվել ԱՆ, ինչի կապակցությամբ տեղեկություններ են ստացվել առ այն, որ ՔԿՀ-ում մայրերի հետ պահվող երեխաներին մանկական սննդով ապահովելու հարցով Արդարադատության նախարարության, Քրեակատարողական ծառայության և ազատությունից զրկված անձանց սնունդ մատակարարող մասնավոր ընկերության միջև տեղի են ունեցել բանակցություններ, որոնց արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն մատակարարման պայմանագրի շրջանակներում համաձայնագիր կնքելու վերաբերյալ: Ըստ համաձայնագրի՝ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող ազատությունից զրկված անձանց կտրամադրվի մանկական սնունդ՝ առանց պայմանագրով սահմանված ֆինանսական միջոցների փոփոխության: Ստացված տեղեկությունների համաձայն՝ համաձայնագրի կնքումը նախատեսվել է իրականացնել մինչև 2022 թվականի հունիսի 15-ը: Այնուամենայնիվ, 2022 թվականի

հունիսի 13-ին ԿԱՄ-ի իրականացրած չհայտարարված մշտադիտարկման այցի դրությամբ որևէ փոփոխություն չի արձանագրվել, ինչը մտահոգիչ է:

Լոգանքի և անձնական հիգիենայի կազմակերպում

55. Լոգանքը և անձնական հիգիենայի պահպանումը մեծ նշանակություն ունեն ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ կանանց ֆիզիկական և հոգեկան առողջության և բարեկեցության համար: Հաշվի առնելով կանանց համար հիգիենայի պահպանման առանձնահատկությունները՝ չափազանց կարևոր է նրանց ապահովել լոգանքի և հիգիենայի պահպանման պատշաճ պայմաններով՝ նախատեսելով համապատասխան հարմարանքներ և ավելի հաճախ լոգանք ընդունելու հնարավորություն: ԿԱՄ-ի ներկայացուցիչները ՔԿՀ-ի վարչակազմի և ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում արձանագրել են, որ լոգանքը մեկուսարանում կազմակերպվում է շաբաթական մեկ անգամ՝ ուրբաթ օրերին: Այս կապակցությամբ ազատությունից զրկված անձինք ՄԻՊ-ի ներկայացուցիչներին ներկայացրել են դժգոհություններ և նշել, որ ՔԿՀ-ում լոգանքը կազմակերպվում է շաբաթվա կոնկրետ օրերի ընթացքում, և օրինակ, այդ օրը վատառողջ լինելու պատճառով լոգանքից չօգտվելու պարագայում ազատությունից զրկված անձանց հնարավորություն չի ընձեռվում լոգանք ընդունել շաբաթվա այլ օրերի ընթացքում, և ազատությունից զրկված անձը ստիպված է լինում լոգանքին սպասել մինչև հաջորդ ուրբաթ:

56. Նշվածի կապակցությամբ ԿԱՄ-ը իր խորին մտահոգություններն է հայտնում և հորդորում է հետևել Եվրոպական բանտային կանոններին (19.4-րդ և 19.7-րդ կանոններ²), և, տարածաշրջանի կլիմայական առանձնահատկություններն ու ջերմային պայմանները հաշվի առնելով, համարժեք հնարավորություններ ստեղծել ցնցուղ ընդունելու կամ լողանալու համար: Ընդ որում՝ հնարավորության դեպքում այն կազմակերպել ամեն օր, առնվազն շաբաթական երկու անգամ (անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ)՝

² Տե՛ս <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae> կայքէջում:

ելնելով ընդհանուր հիգիենայի պահպանության նպատակից: Միևնույն ժամանակ, կանանց հիգիենիկ կարիքների հաշվառմամբ անհրաժեշտ է նախատեսել հատուկ միջոցներ:

57. Լոգանքի կազմակերպման հետ կապված խնդիրներ են բարձրացրել նաև ՔԿՀ-ում աշխատող ազատությունից զրկված կանայք: Այսպես, կանանց տեղամասում լոգանքի կազմակերպման կապակցությամբ ՔԿՀ-ի վարչակազմը հայտնել է, որ այնտեղ պահվող բոլոր կանայք աշխատում են, կարիք ունեն հաճախ լոգանք ընդունելու, ուստիս վերջիններիս լոգանքը տրամադրվում է ամենօրյա ազատ գրաֆիկով: Այնուամենայնիվ, ԿԱՄ-ի ներկայացուցիչների հետ առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված կանայք տեղեկացրել են, որ թեև ամենօրյա աշխատանքից հետո իրենց լոգանք ընդունելու հնարավորություն ընձեռվում է, սակայն այն լիարժեք չէ, քանզի լոգանքը տրամադրվում է գլուխը չլվանալու պայմանով: Ավելին, ազատությունից զրկված կանայք նշել են, որ հաճախ լարվածություն է ստեղծվում քրեակատարողական ծառայողների հետ, երբ լոգանքի ընթացքում պատահաբար թրջվում են նաև մազերը: Նման մոտեցումը խիստ մտահոգիչ է:

58. «Աբովյան» ՔԿՀ-ի մեկուսարանի շենքում առկա է երեք լոգարան, որոնցից երկուսը գտնվում են առաջին, իսկ մեկը՝ երկրորդ հարկում: Առաջին հարկում գտնվող լոգարաններից մեկը մեկտեղված է եղել լվացքատան հետ, որտեղ տեղադրված է եղել երկու ցնցուղ: Պատշաճ պայմաններ են արձանագրվել առաջին հարկի մյուս լոգարանում: Այն եղել է վերանորոգված, լոգարանում տեղադրված երեք ցնցուղները եղել են սարքին: Լոգարանը կահավորված է եղել նաև զուգարանակոնքով, սակայն այն չի ունեցել նստատեղ:

59. Մեկուսարանի երկրորդ հարկի լոգարանի հատակի և պատերի սալիկները եղել են նոր, սակայն ամբողջությամբ թափված է եղել պատերի և առաստաղի ձեփամածիկը, առկա է եղել վերանորոգման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն: Երկրորդ հարկի լոգարանում նույնպես տեղադրված է եղել երեք ցնցուղ, սակայն դրանցից մեկը սարքին չի եղել: Լոգարանը կահավորված է եղել ասիական տիպի սանհանգույցով: Լոգարաններում բացակայել է նաև առանձնացված հանդերձարանը՝ հագուստը խոնավությունից զերծ պահելու հնարավորությամբ:

60. Մեկ այլ խնդիր է ընդհանուր բաղնիքում մինչև երեք տարեկան մանկահասակ երեխաների լոգանքի կազմակերպումը: Մանկահասակ երեխաների լոգանքը կազմակերպվում է շաբաթական մեկ անգամ, քանի որ խցում համապատասխան պայմաններ առկա չեն: Ավելին, մեկուսարանի լոգարաններից մեկում, որտեղ կազմակերպվել է երեխաների լոգանքը, առկա է եղել կոտրված եզրերով տաշտ, ինչը կարող է վտանգավոր լինել վերջիններիս համար:



Լվացք

61. ԿԱՄ-ի մշտադիտարկման ընթացքում պարզվել է, որ ՔԿՀ-ում լվացքը կազմակերպվում է ըստ խցերի: Ստացված տեղեկությունների համաձայն՝ լվացքի մեքենայով հիմնականում լվացվում են ազատությունից զրկված անձանց անկողնային պարագաները և սպիտակեղենը, իսկ հագուստը վերջիններս լվանում են խցերում կամ լոգանքի կազմակերպման օրերին լոգարանում:

62. Հարկ է ընդգծել, որ մայրերի հետ պահվող մինչև 3 տարեկան երեխաների հագուստը և անկողնային պարագաները լվացվում են խցում:

Ջրոսանք և գրաղվածության ապահովում

63. «Աբովյան» ՔԿՀ-ի մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են խնդիրներ նաև ազատությունից զրկված անձանց բացօթյա զբոսանքի և զբաղվածության իրավունքի իրացման կապակցությամբ: Մասնավորապես, թեև զբոսաբակերում առկա են եղել եղանակային վատ պայմաններից պատուպարվելու համար նախատեսված ծածկեր՝ այցի պահին որոշ զբոսաբակերի նստարաններ ամբողջությամբ եղել են թռչված: Զբոսաբակերում առկա է եղել մաքրման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն:



64. Զբոսաբակերում չեն արձանագրվել մարմնամարզությամբ զբաղվելու համար հարմարություններ կամ սարքավորումներ: Զբոսաբակերում զբաղմունքի միջոցների բացակայության պատճառով ազատությունից զրկված անձինք հաճախ չեն օգտվում իրենց զբոսանքի իրավունքից, իսկ օգտվելու դեպքում ընդամենը 15-30 րոպե են անցկացնում զբոսախցերում՝ տրամադրվող 1 ժամի փոխարեն, պնդելով, որ 1 ժամ այնտեղ անցկացնելն անիմաստ է:

65. Մեկ այլ խնդիր է, մեկուսարանի մասնաշենքից դեպի զբոսաբակեր դուրս գալու համար նախատեսված երկաթե աստիճանավանդակը, ինչը հարմարեցված չէ

տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց, ինչպես նաև մանկահասակ երեխաների տեղաշարժման համար, որն էլ իր հերթին խոչընդոտ է վերջիններիս զբոսանքի իրավունքն ապահովման տեսանկյունից:



66. Մեկուսարանի մասնաշենքում, որտեղ հիմնականում պահվել են կալանավորված անձինք և անչափահասներ, նախատեսված են թվով չորս զբոսաբակ, որոնք ֆիզիկապես չեն կարող ապահովել այնտեղ պահվող ազատությունից զրկված բոլոր անձանց (մշտադիտարկման այցի պահի դրությամբ 41) օրենսդրությամբ ամրագրված երկժամյա զբոսանքը: Մեկուսարանի բնակեցված խցերի թիվը այցի պահին կազմել է 27: Յուրաքանչյուր զբոսաբակ աշխատանքային ութ ժամյա գրաֆիկով ծանրաբեռնելու դեպքում օրենսդրությամբ սահմանված երկուական ժամով ազատությունից զրկված անձանց զբոսանքը հնարավոր կլինի կազմակերպել չորս անգամ, այսինքն, հնարավոր կլինի օրվա ընթացքում միայն տասնվեց խցերում պահվող ազատությունից զրկված անձանց զբոսանքը ապահովվել, այն էլ անընդմեջ այն կազմակերպելու պարագայում: Ինչն էլ փաստացի հնարավորություն չի ստեղծում ազատությունից զրկված բոլոր անձանց զբոսանքի իրավունքի պատշաճ ապահովման համար:

67. ՔԿՀ-ի վարչակազմի ներկայացուցիչները ԿԱՄ-ի ներկայացուցիչների հետ ունեցած զրույցների ընթացքում հայտնել են, որ ՔԿՀ-ի կողմից պարբերաբար

կազմակերպվում են սպորտային միջոցառումներ (շախմատի, սեղանի թենիսի, մրցումներ)՝ յուրաքանչյուր անգամ ներգրավելով ազատությունից զրկված անձանց: Նշվածը հաստատել են նաև ազատությունից զրկված անձինք՝ նշելով, որ սովորաբար սպորտային միջոցառումները կազմակերպվում են իրենց ինքնավար միությունների աջակցությամբ: ԿԱՄ-ին մտահոգում է այն, որ ինչպես նշել են ազատությունից զրկված անձինք՝ այդ միջոցառումներին մասնակցելու հիմնական նպատակը դատապարտյալների անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված տեղեկատվության գնահատման չափորոշիչների համաձայն միավոր ստանալն է: **Մինչդեռ, ՔԿՀ-ում իրականացվող մշակութային և սպորտային միջոցառումները կարևոր բաղադրիչ են հանդիսանում անձի վերասոցիալականացման և վարքագծի ուղղման տեսանկյունից և այն չպետք է սահմանափակվի միավորներ վաստակելու հնարավորությամբ:**

68. ԿԱՄ-ի կողմից արձանագրվել են մի շարք խնդիրներ կապված սպորտային և մշակութային միջոցառումների պատրաստման և իրականացման տեխնիկական միջոցների հետ: Մասնավորապես, ՔԿՀ-ի մեկուսարանի առաջին հարկում տեղակայված մարզասրահում արձանագրվել են անբավարար պայմաններ. պատերի և առաստաղի ծեփամածիկը եղել է թափված, բարձր է եղել խոնավության մակարդակը: Մարզասրահում տեղադրված մարզասարքերից ոչ մեկը, այցի պահի դրությամբ, սարքին չի եղել: Դրանք եղել են կոտրված կամ վնասված, ինչը խնդրահարույց է:



69. Անբարեկարգ վիճակ է արձանագրվել նաև «Մշակույթի կենտրոնի» մասնաշենքի առաջին հարկում գտնվող դահլիճում: Մասնաշենքի երկրորդ հարկում գտնվող գրադարանը վերանորոգման կարիք ունի՝ սենյակում խոնավության մակարդակը եղել է բարձր, բացակայել են վարագույրները, ինչի հետևանքով արևի ուղիղ ճառագայթներն ընկել են գրապահարանների վրա, վնասելով այնտեղ պահվող գրքերը, ինչը մտահոգիչ է:



70. Մեկ այլ մտահոգիչ խնդիր է ազատությունից զրկված անձանց հանգստյան օրերի զբաղվածության հարցը: Կազմակերպվող դասընթացներն ու միջոցառումները իրականացվում են շաբաթվա աշխատանքային օրերին, որոնց միջոցով ինչ-որ կերպ լուծվում է ազատությունից զրկված անձանց զբաղվածության հարցը, իսկ հանգստյան օրերին ազատությունից զրկված անձիք բացառապես որևէ զբաղմունք չեն ունենում:

71. ԿԱՄ-ն իր մտահոգությունն է հայտնում այս կապակցությամբ և մեկ անգամ ևս ընդգծում ազատությունից զրկված անձանց զբաղվածության պատշաճ ապահովման հարցին հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Ազատությունից զրկված անձանց բաղվածության ոչ բավարար ապահովվումը միջանձային հարաբերություններում լարվածության աճին նպաստող գործոն է, և չի նպաստում ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման նպատակներին:



72. Մանկահասակ երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջ զարգացմանը նպաստող միջավայրի հասանելիության և առանձին, կահավորված խաղահրապարակով զբոսաբակի առկայության խնդիր նույնպես արձանագրվել է ԿԱՄ-ի կողմից: Նշվածի կապակցությամբ իրենց դժգոհությունն են հայտնել նաև իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխաներ

ունեցող ազատությունից զրկված կանայք՝ նշելով, որ համապատասխան պայմանների բացակայության պատճառով իրենք գրեթե ամեն օր բախվում են բազմաթիվ դժվարությունների: Մասնավորապես, ազատությունից զրկված կանանցից մեկը պնդել է, որ երեխային տևական ժամանակ է դուրս չի բերում զբոսանքի, քանի որ չի ցանկանում զբոսնել երեխայի հետ զբոսաբաբակում՝ այլ կանանց դիտարկման ներքո, շփվել կամ պատասխանել վերջիններիս հարցերին:


73. Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն³ որոշման հավելվածի 79-րդ կետը սահմանում է, որ *հողի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում տեղավորվում են այնպես, որպեսզի հնարավորինս նվազագույնի հասցվի այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալների հետ շփումը:*

Կարճատև և երկարատև տեսակցություններ

74. «Աբովյան» ՔԿՀ-ում առկա են կարճատև և երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակներ: Կարճատև տեսակցությունների մեկ սենյակ, որտեղ տեղադրված են եղել 7 սեղաններ և նստարաններ: Կարճատև տեսակցությունների սենյակում միաժամանակ կազմակերպվում է մի քանի կարճատև տեսակցություն, սակայն դրանց ընթացքում անձանց առանձնացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովված չեն: ՔԿՀ-ում առկա է երկարատև տեսակցությունների համար նախատեսված երկու սենյակ: Տեսակցության սենյակներում առկա են եղել մեկական երկտեղանոց մահճակալ, ինչը խնդրահարույց է ազատությունից զրկված անձի ընտանիքի մի քանի անդամների (այդ թվում՝ երեխաների) հետ տեսակցելու պարագայում: Խիստ մտահոգիչ է, որ տեսակցության եկած անձինք, այդ թվում՝ անչափահասները, չունեն նաև զբոսանքի դուրս գալու հնարավորություն՝ առանձնացված զբոսաբաբակի բացակայության պատճառով: ՔԿՀ-ում

³ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշում:

տեսակցության եկած երեխաների համար առանձնացված է եղել մանկական սենյակ՝ կահավորված բազմոցով, աթոռներով և սեղանով, առկա են եղել խաղալիքներ:



Կապն արտաքին աշխարհի հետ

75. ԿԱՄ-ի կողմից բազմիցս բարձրացվել է ազատությունից զրկված անձանց կողմից արտաքին աշխարհի հետ կապի պահպանման կարևորությունը: Ազգականների հետ շփումը դրական է անդրադառնում նրանց վրա, ինչը նաև էական նշանակություն ունի վերջիններիս վերասոցիալականացման և սոցիալական կապերը չկորցնելու տեսանկյունից:

76. ԿԱՄ-ի մշտադիտարկման այցի պահին «Աբովյան» ՔԿՀ-ի բոլոր տաքսոֆոնները եղել են սարքին, և դրանցից հնարավոր է եղել անվճար զանգահարել ՄԻՊ-ի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին: Տաքսոֆոնների մոտ փակցված են եղել նաև ՄԻՊ-ի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին զանգ կատարելու վերաբերյալ համապատասխան ուղեցույցներ, ինչը ողջունելի է: ՔԿՀ-ում ազատությունից զրկված անձինք պարբերաբար օգտվում են նաև տեսազանգից: Տեսազանգերն իրականացվում են սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների (ՍԻԱՀ) բաժնի աշխատակցի աջակցությամբ: Զանգը հաջողելու դեպքում աշխատակիցը լքում է տեսազանգի սենյակը, տեսողական հսկողությունը իրականացվում է սենյակի դռան վրա առկա դիտանցքից:

77. ԿԱՄ-ի ներկայացուցիչների հետ ունեցած առանձնագրույցների ընթացքում ազատությունից զրկված կանայք դժգոհություն են հայտնել քարտերով տրամադրվող հեռախոսային կապի բարձր սակագներից՝ նշելով, որ դրանցից օգտվելը ֆինանսապես ձեռնտու չէ: Ըստ վերջիններիս՝ մեկ քարտն արժե 1200-ից 1500 դրամ, որով հնարավոր է խոսել ընդամենը 52 րոպե:



Հանձնույթեր

78. Մտահոգիչ է «Աբովյան» ՔԿՀ- մուտք գործող սննդի (հանձնույթների) ընդունման հետ կապված հարցերը: Չնայած նրան, որ հանձնույթների ընդունման սենյակն ապահովված է եղել հանձնույթների ստուգման սարքով՝ ազատությունից զրկված անձինք ԿԱՄ-ի ներկայացուցիչների հետ ունեցած առանձնագրույցների ընթացքում նշել են, որ հաճախ ՔԿՀ մուտք գործող սնունդը ստուգվում է նաև մեխանիկական միջոցներով՝ մասնատելով և փչացնելով դրանք:

79. Այս համատեքստում մեխանիկական իրերի չվարակազերծումը և բազմակի օգտագործումը կարող են առաջացնել սննդի մեխանիկական աղտոտում և վարակի տարածում:

Հակումներ

80. ԿԱՄ-ն իր տարեկան և արտահերթ զեկույցներում բարձրացրել է մի շարք հարցեր կապված ազատությունից զրկված անձանց, որպես բացասական հակումների ունեցողի հաշվառման և հաշվառումից հանելու կարգի և գործընթացների հետ կապված: ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանի հավելված 1-ի 45-րդ կետը սահմանում է, որ *բացասական հակում ունեցող են համարվում այն կալանավորված անձինք և դատապարտյալները, որոնք հիմնարկի ներքին կանոնակարգը խախտելու, իրենց կամ այլ անձանց կյանքին, առողջությանը վնաս պատճառելու վարքագծային և անձնական հակում ունեն, ինչպես նաև այն դատապարտյալները, որոնք ունեն հանցածին դիրքորոշումներ:* Միաժամանակ, կալանավորված անձին և դատապարտյալին՝ որպես բացասական հակում ունեցողի հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու կարգը սահմանված է վերոնշյալ հրամանի 46-րդ կետում, համաձայն որի՝ *կալանավորված անձը և դատապարտյալը, որպես բացասական հակում ունեցող հաշվառման է վերցվում և հաշվառումից հանվում է հիմնարկի պետի որոշմամբ՝ հիմնարկի անվտանգության ապահովման, սոցիալական, հոգեբանական և իրավական, բժշկական սպասարկման, օպերատիվ ստորաբաժանումների կողմից տրված տեղեկությունների կամ եզրակացությունների հիման վրա:* Վերոնշյալ օրենսդրական ձևակերպումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այն չի բավարարում իրավական որոշակիության պահանջին և կարող է իրարամերժ մեկնաբանությունների տեղիք տալ, ինչպես նաև գործնականում հանգեցնել տարբերակված մոտեցման: Խնդրահարույց է նաև դատապարտյալի կամ կալանավորված անձի՝ որպես բացասական հակում ունեցողի հաշվառման վերցվելու և հաշվառումից հանվելու կարգավորումները: Բացասական հակում ունենալու հիմքով հաշվառման վերցնելու և, հատկապես, հաշվառումից հանելու գործընթացը պրակտիկայում ազատությունից զրկված անձանց համար կանխատեսելի և որոշակի չէ, ինչը բարձրացնում է կամայականությունների ռիսկը: Կալանավորված անձի և դատապարտյալի անհատական քարտում վարվում է ուղղման անհատական պլան, որում ի թիվս այլ տեղեկությունների, պետք է ներկայացվեն նաև դատապարտյալի հոգեբանական առանձնահատկությունները (անհատական քարտի VI մաս). հուզական վիճակը, ադապտիվությունը, միջանձնային

հարաբերությունները, անձնային որակները, խառնվածքը, ինտելեկտուալ մակարդակը: Բացի այդ, պետք է գնահատվեն բացասական վարքի դրդապատճառները, քրեածին վարքի դրդող գործոնը, կրկին հանցագործություն կատարելու ռիսկայնությունը, բացասական հակումները, սոցիալական պահանջմունքները և հնարավորությունները: Նմանատիպ խորքային հոգեբանական տեղեկությունների հավաքը ենթադրում է բազմակողմանի և պրոֆեսիոնալ հոգեդիագնոստիկ գործընթաց՝ հոգեբանական հետազոտական մեթոդաբանության կիրառմամբ՝ խորքային հարցազրույց, կառուցվածքայնացված դիտում, թեստավորում (անկետավորում) և այլն: Այնուամենայնիվ, գործնականում նմանօրինակ աշխատանքներ հիմնականում չեն կատարվում՝ անհատական քարտերում գրառումները հիմնականում կրել են ձևական բնույթ, եղել են ընդհանրական և չեն պարունակել բազմակողմանի և մասնագիտական հոգեդիագնոստիկ աշխատանքների պլանի մանրամասն նկարագրություն: «Բացասական հակում ունեցողներ կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման» մատյանի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ «*Հակումների նվազեցման ուղղությամբ իրականացված աշխատանքների համառոտ բովանդակությունը*» սյունակում հիմնականում արձանագրվում են ընդհանուր բնույթի տեղեկություններ, չմասնավորեցնելով հակումների նվազեցման ուղղությամբ տարված աշխատանքների հստակ նկարագրությունը: Այսպիսով, անհրաժեշտ է սահմանել «բացասական հակում» հասկացությունը, ինչպես նաև քննարկման առարկա դարձնել որոշակի տեսակի հակումները (ագրեսիայի և կոնֆլիկտայնության) բացասական հակումների շարքին դասելու հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով անձի անհատական ռիսկայնության գործոնը:

4. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԱՆՑ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

81. ԿԱՄ-ի կողմից իրականացված մշտադիտարկման այցի պահին «Աբովյան» ՔԿՀ-ում պահվել է կալանավորված անձի կարգավիճակ ունեցող 4 անչափահաս և 1 չափահաս անձ (18 տարեկան), որը չափահաս է դարձել ՔԿՀ-ում պահվելու ընթացքում (վերջինս

պահվել է միայնակ): ՔԿՀ-ում պահվող 4 անչափահաս կալանավորված անձինք տեղաբաշխված են եղել 3 խցերում: Անչափահասներից երկուսը պահվել են միասին, իսկ մյուս երկուսը միայնակ՝ առանձին խցերում:

82. Անչափահաս կալանավորված անձինք պահվել են ՔԿՀ-ի մեկուսարանի երկրորդ հարկի խցերում, որտեղ խոնավության մակարդակը եղել է բարձր, իսկ պատերի և առաստաղների ծեփամածիկը՝ թափված, որոշ տեղերում՝ նաև քանդված: Վերոնշյալ խցերը կահավորված են եղել երկու մեկհարկանի մահճակալներով: ԿԱՄ-ը իր մտահոգություններն է հայտնում այս կապակցությամբ, քանի որ ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման առանձնահատուկ պայմանների բացակայությունը խնդրահարույց է:

83. Շարունակում է մտահոգիչ մնալ ազատությունից զրկված անձանց, իրենց կամքից անկախ, երկարատև միայնակ պահելը: Այսպես, մշտադիտարկման այցի պահի դրությամբ 18-ամյա արական սեռի կալանավորված անձը 10 ամիս պահվել է միայնակ՝ ՔԿՀ-ում չափահաս դարձած արական սեռի այլ կալանավորված անձինք չլինելու պատճառով: Միայնակ է պահվել նաև ազատությունից զրկված անչափահաս տղաներից մեկը, որի միակ զբաղմունքը միջնակարգ կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող դասընթացներն են, իսկ օրվա մնացած մասը փաստացի վերջինս անցկացրել է խցում՝ հիմնականում հեռուստացույց դիտելով: Հարկ է ընդգծել, որ միայնակ պահվող անչափահասը դասընթացներին մասնակցում է միայնակ, իսկ ազատությունից զրկված անչափահաս մյուս տղաների հետ շփումները սահմանափակված են՝ չնայած նրանց միջև լավ հարաբերություններին: Անչափահաս ազատությունից զրկված անձինք շփվում են հարակից խցերի պատերին խփելու և բարձրաձայն խոսելու, ինչպես նաև խցերի պատուհաններից միմյանց հետ զրուցելու միջոցով: **Այսպիսով, ազատությունից զրկված այլ անչափահասների բացակայության և անչափահասներին չափահասներից անջատ պահելու կանոնի կիրառման արդյունքում անձը տևական ժամանակ (կոնկրետ դեպքում 10 ամիս) պահվում է միայնակ՝ առանց այլ անձանց հետ բավարար շփման հնարավորության:**

84. Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ Նելսոն Մանդելայի կանոնների համաձայն՝ *մեկուսացում ասելով պետք է հասկանալ ազատությունից զրկված անձանց*

առանց մարդկային բավարար շփման օրվա ընթացքում 22 ժամ և ավելի մեկուսի պահելը, իսկ երկարաժամկետ մեկուսացման տակ պետք է հասկանալ ազատությունից զրկված անձին 15 օրը գերազանցող ժամանակահատվածով մեկուսացնելը⁴: Դրա հետ մեկտեղ, պետք է ընդգծել, որ մարդկային բավարար շփում չի կարող համարվել քրեակատարողական ծառայողի կողմից սննդի փոխանցումը կամ հսկողության նպատակով խցի դիտարկումը: Ավելին, ՔԿՀ-ի սոցիալ-հոգեբանական ոլորտի աշխատակիցների հետ զրույցները, զբոսանքը, միջնակարգ կրթության առանձնացված ապահովումը՝ նպատակաուղղված ծրագրերի բացակայության պայմաններում չեն կարող ապահովել անձի բավարար մարդկային շփումը, ինչը խիստ մտահոգիչ է:

85. Ազատությունից զրկված անձանց օգտակար բնույթի բավարար աշխատանքով ապահովելու, ժամանցի հնարավորություն ընձեռելու (սպորտ, խաղեր, մշակութային միջոցառումներ և ժամանցի այլ ձևեր), կրթական ծրագրերը հասանելի դարձնելու վերաբերյալ պահանջներ են բովանդակում նաև Եվրոպական բանտային կանոնները⁵: Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ *ազատությունից զրկման ցանկացած վայրում պետք է ապահովվեն ազատությունից զրկված բոլոր անձանց հասանելիությունը կրթական ծրագրերին՝ հնարավորինս ապահովելով դրանց բազմակողմանիությունը և հաշվի առնելով անձի անհատական պահանջմունքներն ու ցանկությունները: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ազատությունից զրկված անչափահասների կրթությանը*⁶: Ըստ ԽԿԿ-ի նպատակային զբաղմունքների բացակայությունը, հարկապես վնասակար է ազատությունից զրկված անչափահասների համար, ովքեր ֆիզիկական ակտիվության և մտավոր խթանման հատուկ կարիք ունեն: Ազատությունից զրկված անչափահասներն օրվա ընթացքում պետք է ապահովվեն կրթական, սպորտային, մասնագիտական դասընթացների, հանգստի և արտախցային այլ

⁴ Տե՛ս https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/GA-RESOLUTION/E_ebook.pdf կայքէջում, կանոն 44:

⁵ Տե՛ս <https://rm.coe.int/16806f5b92> կայքէջում, կանոններ 26.1-26.3, 26.6, 26.9, 26.10, 27.3, 27.6, 28.1-28.5 և այլն:

⁶ Տե՛ս <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae> կայքէջում, կանոններ 28.1 և 28.3:

նպատակային գործունեության ամբողջական ծրագրերով⁷: Այս կապակցությամբ «Աբովյան» ՔԿՀ-ի վարչակազմի տրամադրած պարզաբանումների համաձայն՝ ազատությունից զրկված անչափահաս անձանց շփումներն ապահովելու նպատակով իրենք ժամանակ առ ժամանակ ռոտացիայի մեխանիզմով փոփոխում են վերջիններիս խցերը, որպեսզի նրանցից ոչ ոք երկարատև միայնակ չմնա: Այնուամենայնիվ, քրեակատարողական ծառայողները նշել են, որ վերը նշված միայնակ պահվող կալանավորված անձանց խցերում այլ անձանց տեղաբաշխել չեն կարող վերջիններիս անվտանգության ապահովման խնդիրների պատճառով:

86. «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող անչափահաս կալանավորված անձինք ունեն լրջագույն խնդիրներ զբաղվածության և ժամանակի արդյունավետ կառավարման հետ կապված: Այդ մասին բարձրաձայնել են նաև անչափահաս կալանավորված անձինք ԿԱՄ-ի ներկայացուցիչների հետ առանձնազրույցների ժամանակ: Վերջիններս բարձրացրել են զբաղվածության, այդ թվում՝ մշակութային և սպորտային միջոցառումների, ինչպես նաև ժամանցի այլ ծրագրերի սակավության հարցեր: Ազատությունից զրկված անչափահաս անձինք ցանկություն են հայտնել ՔԿՀ-ում ֆուտբոլի, շախմատի, շաշկիի կամ այլ մրցաշարեր, ինչպես նաև կինոդիտումներ ավելի հաճախ կազմակերպելու կապակցությամբ: Կալանավորված անչափահաս անձինք նշել են, որ ներգրավված են ՔԿՀ-ում իրականացվող միջնակարգ կրթական ծրագրերում, սակայն զբաղմունքի հիմնական միջոցը հեռուստացույց դիտելն է:

87. ԿԱՄ-ի ներկայացուցիչները ուսումնասիրել են նաև «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող անչափահաս անձանց կրթության իրավունքի իրացումը: Այսպես, մշտադիտարկման այցի պահին ուսումնական ծրագրում ներգրավված են եղել 4 անչափահաս տղաներ, ինչպես նաև մեկ 19 տարեկան կալանավորված կին, որը մինչ կալանավորվելը չէր ավարտել հանրակրթական ծրագիրը և իր խնդրանքով դասընթացներին մասնակցել է արական սեռի ներկայացուցիչներից առանձին: Այս կապակցությամբ ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: ՀՀ

⁷ Տե՛ս ԽԿԿ գործունեության վերաբերյալ 24-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 2013 թվականի օգոստոսի 1-ից 2014 թվականի դեկտեմբերի 31-ը, <https://rm.coe.int/1680696a9c> կայքէջում, կետ 107:

քրեակատարողական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն ունի օրենքով նախատեսված կրթություն ստանալու իրավունք: Նույնաբովանդակ դրույթ է նախատեսված նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով: ԽԿԿ-ի 2-րդ ընդհանուր զեկույցում նշված է, որ *ազատությունից զրկված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն): Այս ծրագրերի իրականացումը կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ նրանից, թե ում համար են դրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե կալանավորվածների*⁸: Մեկ այլ դեպքում՝ ազատությունից զրկված անչափահաս անձանցից մեկի 18-ը լրանալուն պես տեղափոխվել է Նուբարաշեն ՔԿՀ, բայց, քանի որ կրթական ծրագիրն ավարտված չի եղել մասնագետներն իր հետ հեռավար կարգով են կազմակերպել դասընթացները:


88. ԿԱՄ-ի մշտադիտարկման այցի ժամանակ անչափահասները եղել են ամառային արձակուրդում, որոշներն էլ ավարտական քննական շրջանում: Այնուամենայնիվ ԿԱՄ-ի ներկայացուցիչների կողմից ուսումնասիրվել են 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասացուցակները և արձանագրվել, որ անչափահասներն աշխատանքային օրերին մինչև ժամը 16:00-ի սահմաններում գտնվել են դասապրոցեսի մեջ: Ավելին, միջնակարգ կրթական ծրագրի շրջանակներում վերջիններս ուսանում են հայոց լեզու, գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, հայոց պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, համաշխարհային պատմություն, հասարակագիտություն, հանրահաշիվ, երկրաչափություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, կենսաբանություն, ինֆորմատիկա, ֆիզկուլտուրա առարկաները և խեցեգործություն:

89. ՄԻՊ-ի ներկայացուցիչների հետ առանձնազրույցների ընթացքում ՔԿՀ-ում դասավանդող ուսուցիչները նշել են, որ ցածր աշխատավարձով պայմանավորված՝ ստիպված են լինում համատեղել ՔԿՀ-ում իրենց աշխատանքը հանրակրթական այլ դպրոցներում աշխատանքի հետ, ինչը ֆիզիկապես և հուզականորեն սպառում է իրենց:

⁸ Տե՛ս <https://rm.coe.int/1680696a3f> կայքէջում, կետ 47:

Վերոնշյալ հանգամանքը կարող է բացասաբար անդրադառնալ ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա:

90. Խիստ մտահոգիչ է, որ շենքը, որտեղ կազմակերպվել են դասընթացները, ունեցել է հիմնանորոգման և մաքրման խիստ անհրաժեշտություն: Մասնավորապես, շենքում իրականացվել են ջրահեռացման համակարգի մասնակի վերանորոգման աշխատանքներ, որոնց արդյունքում ողջ շենքը գտնվել է կիսաքանդված վիճակում՝ լի է եղել շինարարական աղբով, ինչը դժվարացրել է շենքում տեղաշարժվելը: Դասասենյակները կահավորված են եղել հին նստարաններով, սեղաններով և անհրաժեշտ այլ պարագաներով: Դպրոցում առանձնացված է եղել նաև մարզադահլիճ, որը ևս հիմնանորոգման անհրաժեշտություն է ունեցել: Մշտադիտարկման այցի պահի դրությամբ ՔԿՀ-ի մարզադահլիճը հագեցած չի եղել մարզական գույքով: Մասնավորապես՝ բացակայել են գնդակներ, այդ թվում՝ սեղանի թենիսի: ՔԿՀ-ի ներկայացուցիչները հայտնել են, որ գնդակները, ինչպես նաև պարանները գտնվում են ՔԿՀ-ի գրադարանում, անհրաժեշտության դեպքում վերցնում են այնտեղից:



5. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

91. ԿԱՄ-ի մշտադիտարկման այցի պահին «Աբովյան» ՔԿՀ-ում պահվել են ազատությունից զրկված օտարերկրացի վեց անձ: Վերջիններս եղել են Վրաստանի, Ռուսաստանի Դաշնության, Պերուի Հանրապետության, Գվատեմալայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության քաղաքացիներ: Ազատազրկված անձանցից 5-ը եղել են կալանավորված անձ, մեկը՝ դատապարտյալ:

92. ԿԱՄ-ի ներկայացուցիչների հետ առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված օտարերկրացի անձինք որպես իրենց իրավունքների պաշտպանության առաջնային խոչընդոտ նշել են հաղորդակցման դժվարությունները, մասնավորապես լեզվական խոչընդոտները, որոնք առաջացնում են մի շարք բարդություններ առաջնային կարիքների բավարարման, բուժօգնության ապահովման, միջավայրում սոցիալ-հոգեբանական ինտեգրման տեսանկյունից: Ինչպես արձանագրվել է առանձնազրույցների ընթացքում՝ ազատությունից զրկված օտարերկրացի անձանցից ոմանք անձնակազմի հետ իրենց առօրյա շփումները հնարավոր դարձնելու համար ստիպված են եղել սովորել հայերեն որոշ բառեր կամ բառակապակցություններ:

93. Փաստացի, ՔԿՀ-ներում թարգմանչական ծառայությունների բացակայության պատճառով հայերեն լեզվին չտիրապետող ազատությունից զրկված անձանց հետ հնարավոր չէ իրականացնել արդյունավետ հաղորդակցություն: Ավելին, նրանց հետ վերասոցիալականացման, հոգեբանական աշխատանքները լիարժեք չեն կազմակերպվում կամ ընդհանրապես չեն իրականացվում: Մասնավորապես՝ ազատությունից զրկված անձինք նշել են, որ շփման և հաղորդակցման խոչընդոտների պատճառով իրենք հնարավորություն չեն ունենում լիարժեք մասնակցել ՔԿՀ-ում կազմակերպվող մշակույթային միջոցառումներին, ինչպես նաև լիարժեք օգտվել բժշկական, հոգեբանական և իրավաբանական ծառայություններից:

94. Խնդրահարույց է նաև ազատությունից զրկված օտարերկրացի անձանց բժշկական օգնության և սպասարկման պատշաճ ապահովումը՝ պայմանավորված

լեզվական խոչընդոտով: Չնայած նրան, որ ԱՆ-ը 24 ժամ/7 օր աշխատանքային ռեժիմով բոլոր ՔԿՀ-ներում 32 լեզուների բանավոր և գրավոր թարգմանության ծառայությունների պատշաճ ապահովման նպատակով դեռ 2022 թվականի ապրիլ ամսին կնքել է պայմանագիր, սակայն այցի պահի դրությամբ այդ ծառայությունից ՔԿՀ-ը չի օգտվել:

95. Այսպիսով, խնդրահարույց է ազատությունից զրկված օտարերկրացի անձանց առողջության պահպանման, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն ստանալու և այլ հասանելի ծառայություններից օգտվելու իրավունքների ապահովման հարցը: Նշվածը, իր հերթին, կասկածի տակ է դնում օտարերկրացի դատապարտյալների հետ ուղղման ու վերասոցիալականացման աշխատանքների իրականացման արդյունավետությունը:

96. Խնդրի կապակցությամբ իր դիրքորոշումն է արտահայտել նաև ԽԿԿ-ն: Մասնավորապես, Ջիբրալթարի վերաբերյալ 2015 թվականի զեկույցում ԽԿԿ-ն նշել է, որ *եթե ՔԿՀ-ի վարչակազմը չի տիրապետում այնպեղ պահվող ազատությունից զրկված անձանց լեզվին, ապա վերջիններիս հետ հաղորդակցումը դյուրին դարձնելու համար պետք է ապահովվի համապատասխան թարգմանչական ծառայությունների ներգրավվածությունը*⁹:

97. ԽԿԿ-ն դեռևս Հունաստանի վերաբերյալ 1994 թվականի զեկույցում նշել է նաև, որ *ՔԿՀ-ներում պահվում են զգալի թվով ազատությունից զրկված օտարերկրացի անձինք, և նրանցից ոմանք չունեն լիարժեք պարկերացում հիմնարկի ռեժիմի կամ իրենց իրավունքների և պարտականությունների մասին, ինչպես նաև ՔԿՀ-ի վարչակազմի և ազատությունից զրկված օտարերկրացի անձանց հաղորդակցման կապակցությամբ առկա են լուրջ բարդություններ: Նման իրավիճակը կարող է առաջացնել թյուրըմբռնումներ և վեճեր: Հետևաբար, ԽԿԿ-ն առաջարկել է համապատասխան քայլեր ձեռնարկել այդ բարդությունները հաղթահարելու ուղղությամբ (օրինակ՝ ՔԿՀ-ում սահմանված կարգը և ռեժիմը, ազատությունից զրկված անձանց և քրեակատարողական ծառայողների*

իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև բողոքարկման և կարգապահական ընթացակարգերը նկարագրող տեղեկատվական գրքույկների պատրաստում և համապատասխան օտար լեզուներով թարգմանություն, ազատությունից զրկված անձանց և քրեակատարողական ծառայողների միջև ամենօրյա փոխհարաբերություններում առավել հաճախ օգտագործվող արտահայտությունների թարգմանություն, քրեակատարողական ծառայողների համար օտար լեզուների տարրական ուսուցում¹⁰:

98. Շփման համար լեզվական խնդիրները լուծելու և ազատությունից զրկված օտարերկրացի անձանց և քրեակատարողական համակարգի աշխատակիցների հաղորդակցվելու հնարավորությունն ապահովելու կապակցությամբ ՄԻՊ-ը բազմիցս առաջարկել է ՔԿՀ-ներում նրանց հետ աշխատանքներում ներգրավել թարգմանիչներ, մշակել զրուցարաններ, ձեռք բերել թարգմանչական հատուկ սարքեր կամ աշխատակիցների համար կազմակերպել համապատասխան օտար լեզուների ուսուցման դասընթացներ:

99. ԿԱՄ-ի ներկայացուցիչների հետ առանձնազրույցներում ազատությունից զրկված օտարերկրացի անձինք հայտնել են նաև, որ ազգականների հետ տեսակցությունների բացակայության պարագայում նախընտրելի է ավելի հաճախ և ավելի երկար ժամանակով օգտվել տեսազանգի հնարավորությունից:

100. Այս համատեքստում մեկ այլ խնդիր է ազատությունից զրկված օտարերկրացի անձանց ազգականների և ազատությունից զրկված օտարերկրացի անձի տարբեր ժամային գոտիներում գտնվելու հանգամանքով պայմանավորված տեսազանգերի կազմակերպման դժվարությունները: Մասնավորապես, հաճախ ազատությունից զրկված օտարերկրացի անձինք հնարավորություն չեն ունենում տեսազանգի միջոցով կապ հաստատել ազգականների հետ, քանի որ նրանք գտնվում են այլ ժամային գոտիներում և ՔԿՀ-ում տեսազանգի թույլատրերի ժամերը չեն համընկնում իրենց ազգականների գտնվելու վայրի ժամային գոտու հետ:

¹⁰ Տե՛ս <https://rm.coe.int/16806964c9> կայքէջում, կետ 102:

101. Այս կապակցությամբ ՄԻՊ-ը կոչ է անում իրավասու մարմիններին համապատասխան իրավական կարգավորման միջոցով նախատեսել ազատությունից զրկված օտարերկրացի անձանց տեսազանգի հնարավորությունից օգտվելու ողջամիտ հաճախականություն և տևողություն՝ հաշվի առնելով ժամային գոտիների տարբերությունների հնարավորությունները:

6. ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

102. ԿԱՄ-ի մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ կանանց և անչափահասների հետ իրականացվող հոգեբանական աշխատանքների համար նախատեսված սենյակների կահավորանքը, դասավորվածությունը, ներքին հարդարվածությունը, ինչպես նաև հոգեբանների կողմից սենյակների օգտագործումը չեն բավարարում հոգեբանական աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններին, խոչընդոտում են հոգեթերապևտիկ վստահելի և ապահով միջավայրի ստեղծմանը:

103. Մշտադիտարկման այցի ընթացքում հոգեբանական աշխատանքի համար նախատեսված սենյակների վերաբերյալ բարձրաձայնված խնդիրներին ի պատասխան՝ ԱՆ-ը, հաշվի առնելով ներկայացված դիտարկումները, նշել է, որ կալանավորված անձանց պահելու վայրում նախատեսված հոգեբանի սենյակի կահավորանքի դասավորությունը փոփոխվել է: ԿԱՄ-ի գործունեության ընթացքում արձանագրված խնդիրներին արագ արձագանքման նման պրակտիկան ողջունելի է:



104. Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ հոգեբանի կողմից առկա է կանխակալ, ոչ պրոֆեսիոնալ վերաբերմունք հոգեբանական աշխատանքի և ազատությունից զրկված անձանց վերաբերյալ, ինչը կարող է նվազեցնել ազատությունից զրկված անձանց կողմից հոգեբանին դիմելիությունը, ինչպես նաև լուրջ խոչընդոտ հանդիսանալ ազատությունից զրկված անձանց հետ կոնտակտի հաստատման, հետագա աշխատանքների արդյունավետության ապահովման տեսանկյունից:

105. Մշտադիտարկման այցի ժամանակ ուսումնասիրվել են նաև հոգեբանների կողմից լրացվող փաստաթղթերը: Արձանագրվել է, որ հոգեբանների կողմից արված գրառումները կրել են ֆորմալ բնույթ, չեն արտացոլել ազատությունից զրկված անձանց հետ իրականացված աշխատանքները, անձանց հոգեբանական վիճակի հստակ նկարագրությունը և աշխատանքի արդյունքները:

106. Հատկանշական է, որ ազատությունից զրկված անձանց հետ իրականացվող աշխատանքների վերաբերյալ գրառումների որոշակիորեն համառոտ և ոչ խորքային լինելը ՔԿՀ-ի վարչակազմի կողմից մեկնաբանվել է որպես մասնագիտական էթիկայից բխող հանգամանք՝ գաղտնիության (կոնֆիդենցիալության) ապահովման տեսանկյունից:

107. Անհրաժեշտ է նշել, որ իրականացված հոգեբանական աշխատանքների ընթացքում կիրառված մեթոդների, մեթոդիկաների, տեխնիկաների, դրանց նկարագրության, արդյունքների վերաբերյալ գրառումները չեն պարունակում կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ խիստ անձնական

տեղեկություններ և չեն վտանգում գաղտնիության սկզբունքը: Ավելին, հնարավոր է տալ իրականացված աշխատանքների խորքային նկարագիր՝ շրջանցելով անձի վերաբերյալ խիստ անձնական տվյալները, ինչը ևս մասնագետի պրոֆեսիոնալիզմի բաղադրիչներից է: Հոգեբանների կողմից իրենց անհատական նյութերում մանրամասն կատարված գրառումները միջմասնագիտական քննարկումների, այլ (հարակից) մասնագետների կողմից իրենց հետագա աշխատանքների պլանավորման տեսանկյունից կիրառելի չեն: Վերոնշյալը խնդրահարույց է նաև հոգեբանների փոփոխման, նոր հոգեբանների ներգրավման տեսանկյունից:

108. Պաշտպանի ներկայացուցիչների կողմից մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է նաև ՔԿՀ-ում կիրառվող ախտորոշիչ փաթեթի համալրման անհրաժեշտություն: Խնդրահարույց է հոգեբանների կողմից անձնական դիտարկումների հիման վրա առկա փաստաթղթերում անձի ինտելեկտուալ մակարդակը ներկայացնող բաժնի, ինչպես նաև այլ բաժինների լրացումը: Ընդ որում, ախտորոշիչ փաթեթի համալրումից հետո անհրաժեշտ է նաև կազմակերպել փաթեթի կիրառմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ, որպեսզի հոգեբանները կարողանան հմտորեն կիրառել այն և տալ կիրառված մեթոդիկաների վերաբերյալ մասնագիտական նկարագիր՝ ապահովելով ախտորոշիչ փաթեթի կիրառումը գործնականում:

109. Մեկ այլ խնդիր է ՔԿՀ-ում հոգեբանի, հոգեբույժի, սոցիալական աշխատողի, իրավաբանի համատեղ աշխատանքների արձանագրման ու վերահսկման միասնական մեխանիզմների բացակայությունը: Միջմասնագիտական կանոնավոր համագործակցության բացակայությունը նվազեցնում է ազատությունից զրկված անձանց հետ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը, խոչընդոտում հետագա աշխատանքների գրագետ կազմակերպմանը:

110. ՄԻՊ-ի ներկայացուցիչներն արձանագրել են, որ ՔԿՀ-ում իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող ազատությունից զրկված կանանց և նրանց երեխաների հետ հոգեբանական աշխատանքներ չիրականացնելու պրակտիկան խնդրահարույց է:

111. Հաշվի առնելով միջավայրի առանձնահատկությունները, երեխաների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև երեխաների՝ հասակակիցների հետ

շփման անհնարինությունը՝ խիստ կարևորվում է հոգեբանական աջակցությունը երեխաների և նրանց ծնողների համար: Վերոնշյալ աշխատանքների իրականացման նպատակով անհրաժեշտ է մշակել հստակ կարգավորումներ և ապահովել տվյալ բնագավառի նեղ մասնագիտացում ունեցող հոգեբանի ներգրավվածությունն իրականացվող հոգեբանական աշխատանքներում:

112. Մեկ այլ խնդրահարույց պրակտիկա է ազատությունից զրկված օտարերկրյա քաղաքացիներին հոգեբանական ծառայություններ տրամադրելու անհնարինությունը՝ պայմանավորված հաղորդակցման դժվարություններով: Տրամադրված տեղեկությունների համաձայն՝ հոգեբաններն օտարերկրյա ազատությունից զրկված անձանց հետ շփման ընթացքում հաճախ ստիպված են լինում կիրառել ժեստերի լեզուն, ինչն օտարերկրյա քաղաքացիների հետ խորքային հոգեբանական աշխատանքը դարձնում անհնար:

113. ԿԱՄ-ի ներկայացուցիչների կողմից արձանագրվել է նաև, որ ՔԿՀ-ում աշխատող հոգեբանները չեն մասնակցում սուպերվիզիաների, ինչն աջակցող մասնագետների մասնագիտական գործունեության կարևոր բաղադրիչն է: Հաշվի առնելով հոգեբանների աշխատանքային միջավայրի առանձնահատկությունները, աշխատանքային գործունեության անհամաչափ ծանրաբեռնվածությունը՝ խիստ կարևորվում է հոգեբանների կողմից սուպերվիզիաների մասնակցություն, քանի որ հակառակ դեպքում անխուսափելի է մասնագետների մոտ հուզական այրման համախտանիշի ձևավորումը, ինչը կարող է վնասել թե՛ մասնագետին, թե՛ այցելուներին:

7. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

114. Մարդու իրավունքների պաշտպանությունը համակողմանի գործընթաց է, որը ենթադրում է այդ գործընթացի բոլոր մասնակիցների իրավունքների երաշխավորում, նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի ապահովում և փոխադարձ հարգանք երաշխավորող հարաբերությունների հաստատում: Այս սկզբունքային մոտեցման բաղադրիչներից է իրավասու այն մարմինների աշխատակիցների, ծառայողների իրավունքների վիճակը, ովքեր իրենց գործունեությամբ

կոչված են իրականացնել հասարակության անդամների իրավունքների պաշտպանությունը: Նշվածն, իհարկե, վերաբերում է նաև քրեակատարողական ծառայողներին, նրանց աշխատանքային արժանապատիվ պայմաններին ու սոցիալական երաշխիքներին, այդ թվում՝ աշխատավարձին:

115. Փոփոխությունների կարիք ունեն քրեակատարողական ծառայողների և բժշկական անձնակազմի բավարար ու համաչափ աշխատավարձի, ինչպես նաև խրախուսման ճկուն մեխանիզմների ստեղծման հարցերը: Այս լուծումներն անմիջական դրական նշանակություն կունենան ՔԿՀ-ներում ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման վիճակի, անմարդկային վերաբերմունքի և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման տեսանկյունից:

116. Խնդրահարույց է նաև «Աբովյան» ՔԿՀ-ի ազատությունից զրկված կանանց հետ անմիջական շփման մեջ գտնվող քրեակատարողական ծառայողների հարաբերակցությունը՝ սեռով պայմանավորված: Այսպես, ՔԿՀ-ի վարչակազմի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ընդհանուր 135 աշխատակիցներից ընդամենը 36-ն են կին, ընդ որում՝ 13-ը քաղաքացիական ծառայողներ: Հարկ է ընդգծել, որ հերթապահ խմբի 16 հաստիքներից 3-ն են զբաղեցված իգական սեռի ծառայողներով, իսկ անվտանգության ապահովման բաժնի 48 հաստիքներից՝ 18-ը: Հարկ է նշել, որ ազատությունից զրկված անձանց հետ անմիջական շփման մեջ գտնվող նշված խմբերի իգական սեռի քրեակատարողական ծառայողների թիվն նվազել է (հերթապահ խմբում 1-ով, անվտանգության ապահովման բաժնում 3-ով), ինչը մտահոգիչ է: **Ուստի, այս կապակցությամբ անհրաժեշտ է շարունակական քայլեր ձեռնարկել:**

117. ԿԱՄ-ի ներկայացուցիչները մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ ՔԿՀ-ի աշխատակիցների համար ստեղծված չեն աշխատանքի բավարար պայմաններ: Մասնավորապես, ՔԿՀ-ի մոտակայքում աշխատակիցների համար սննդի կետերի բացակայության պայմաններում, ծառայողները տանից բերում են չոր սննդամթերք, որի տաքացման հնարավորություն հիմնարկում առկա չէ: Կանանց տեղամասի մասնաշենքի հսկիչ կետի ծառայողների համար նախատեսված չէ առանձնացված սանհանգույց: Այդ պատճառով քրեակատարողական ծառայողներն (ներառյալ՝ արական սեռի) օգտվում են

կանանց տեղամասի առաջին հարկի սանհանգույցից, որի մուտքն ազատությունից զրկված կանանց լոգասենյակի հանդերձարանից է բացվում: Նշված խնդիրն արձանագրվել է նաև «Աբովյան» ՔԿՀ կատարված նախորդ այցերի ընթացքում:

118. Անբավարար են եղել ՔԿՀ-ի վարչակազմի ներկայացուցիչների մեկուսարանի աշխատասենյակների պայմաններ: Մասնավորապես՝ սենյակների առաստաղի և պատերի ծեփամածիկը եղել է թափված, օդում խոնավության աստիճանը՝ բարձր: Առկա է եղել սենյակներում վերանորոգման աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն: Ավելին, մեկուսարանի երկրորդ հարկում աշխատակիցների համար նախատեսված սենյակ չի եղել. քրեակատարողական ծառայողների համար երկրորդ հարկի միջանցքում տեղադրված է եղել ընդամենը մեկ սեղան: Նման պայմաններն անընդունելի են և անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դրանք կարգավորելու համար:

